CEPA

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԿ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ
EUROPE IN LAW

REPORT

ON THE MONITORING RESULTS OF ACTIONS UNDER THE 2022–2026 ACTION PLAN FOR JUDICIAL AND LEGAL REFORMS STRATEGY OF THE REPUBLIC OF ARMENIA

(COVERING 2022 THROUGH TO THE FIRST HALF OF 2026)

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2022-2026 (2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ) ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

YEREVAN
2026
ԵՐԵՎԱՆ







ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԿ



ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԵՎՐՈՊԱ
EUROPE IN
LAW

ՋԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2022-2026 (2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ) ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ

Նոյեմբեր, 2026 ©

Սույն զեկույցը պատրաստվել է ԵՄ–Հայաստան քաղհասարակության պլատֆորմի կողմից Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում արտահայտված գնահատականները որևէ կերպ չեն կարող ընկալվել որպես Եվրոպայի խորհրդի պաշտոնական գնահատականներ:

Զեկույցի 1, 2, 4 (գործողություններ 2, 3, 4, 7 և 10), 5, 8, և 11 ռազմավարական նպատակների կատարման գնահատումն իրականացրել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ–ի ավագ փորձագետ և ծրագրերի համակարգող Սյուզաննա Սողոմոնյանը, իսկ 3, 4 (գործողություններ 1, 5, 6, 8 և 9), 6, 7, 9, 10 և 12–ինը՝ «Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ–ի փորձագետ Հասմիկ Հարությունյանը: Զեկույցի անգլերեն տարբերակի խմբագրումն իրականացրել է «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ–ի նախագահ և ավագ իրավաբան Լուսինե Հակոբյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարության գործողությունների ծրագրի մշտադիտարկում

Մշտադիտարկման շրջանակը և մեթոդաբանությունը

Զեկույցում ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացումը: Ուսումնասիրությունը համադրել է նախատեսված միջոցառումների կատարման ընթացակարգային գնահատումը և ընտրովի որակական գնահատումը՝ պարզելու, թե դրանց իրականացումը որքանով է նպաստել ռազմավարական նպատակների իրագործմանը: Որպես տեղեկատվության աղբյուրներ օգտագործվել են պաշտոնական հաշվետվությունները, իրավական ակտերն ու օրենսդրական նախագծերը, տեղեկատվություն ստանալու նպատակով ուղղված հարցումներին ստացված պատասխանները, շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցները և ֆոկուս խմբային քննարկումը: Քանի որ գնահատումը միջանկյալ բնույթ է կրել, ռազմավարության վերջնական արդյունքային ցուցանիշները չեն գնահատվել:

Ընդհանուր արդյունքները

Գնահատված 87 միջոցառումներից 56-ը կատարվել են ամբողջությամբ, 12-ը՝ մասամբ, իսկ 19-ը չեն կատարվել: Միջոցառումների ընթացակարգային կատարման ցուցանիշը կազմել է 64,37%: Առանձին որակական գնահատման են ենթարկվել 16 ընտրված միջոցառումներ, որոնք վերաբերում են անցումային արդարադատությանը, ժողովրդավարական ինստիտուտներին և սահմանադրական բարեփոխումներին, ինչպես նաև դատական բարեփոխումների շարունակականությանը: Դրանցից հինգը գնահատվել են որպես իրականացված, հինգը՝ մասամբ իրականացված, իսկ վեցը՝ չիրականացված: Իրականացման ցուցանիշը կազմել է 31,25%: Այս արդյունքները վկայում են նախատեսված միջոցառումների կատարման և ակնկալվող ռազմավարական արդյունքների ապահովման միջև էական տարբերության մասին:

Հիմնական բացահայտումներն ըստ 12 ռազմավարական նպատակների

ՆՊԱՏԱԿ 1. Էլեկտրոնային արդարադատություն և թվային համակարգեր: Էլեկտրոնային գործիքներ են ներդրվել քաղաքացիական, վարչական և սնանկության գործերով վարույթներում, քրեական վարույթի մինչդատական փուլում, ինչպես նաև պրոբացիայի, հարկադիր կատարման և իրավաբանական անձանց արխիվների ոլորտներում: Այդուհանդերձ, համակարգերի փոխգործունակությունը, հուսալիությունը, ապացույցների հասանելիությունը, էլեկտրոնային ծանուցումները և գործընթացների ամբողջական թվայնացումը շարունակում են խնդրահարույց մնալ: Նոտարական գործունեության համար նախատեսված մի շարք թվային գործառույթներ չեն ներդրվել, իսկ հրապարակված դատական վիճակագրական տվյալները բավարար չեն բոլոր ակնկալվող արդյունքները ստուգելու համար:

ՆՊԱՏԱԿ 2. Անցումային արդարադատություն: 2024 թվականի դեկտեմբերին ընդունված օրենսդրական փոփոխություններով ստեղծվել է Փաստահավաք հանձնաժողովի ձևավորման իրավական հիմքը, սակայն մշտադիտարկման պահին հանձնաժողովը դեռևս ստեղծված չէր և չէր սկսել իր գործունեությունը: Զեկույցում մատնանշվում են նախատեսված ինստիտուցիոնալ մոդելի թերությունները, մասնավորապես՝ անկախության և ինքնավարության երաշխիքների, անդամների ընտրության, ռեսուրսներով ապահովվածության, տեղեկատվության հասանելիության և արտաքին վերահսկողության առնչությամբ: Հետևաբար, փաստահավաք գործունեությունից ակնկալվող արդյունքները դեռևս չեն ապահովվել կամ ենթակա չեն գնահատման:

ՆՊԱՏԱԿ 3. Ժողովրդավարական ինստիտուտներ և սահմանադրական բարեփոխումներ: Սահմանադրական բարեփոխումների գործընթացը մնում է անավարտ. Մասնագիտական հանձնաժողովի ամբողջական կազմով շարունակական գործունեությունը չի ապահովվել, հանրային քննարկումներին մասնակցությունը չի հասել սահմանված թիրախային մակարդակին, իսկ բարեփոխումների համապարփակ հայեցակարգը և սահմանադրական փոփոխությունների վերջնականացված նախագիծը բացակայել են: Հստակ չեն եղել նաև Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և Մասնագիտական հանձնաժողովի դերակատարումները: Միևնույն ժամանակ, 2024 թվականի դեկտեմբերին ընդունված Ընտրական օրենսգրքի փոփոխությունները գնահատվել են որպես ամբողջությամբ ապահովված արդյունք:

ՆՊԱՏԱԿ 4. Դատական համակարգի բարեփոխում: Երևանում ստեղծվել են քաղաքացիական և քրեական գործեր քննող առանձին առաջին ատյանի դատարաններ, վերանայվել է վերադաս դատարանների դատավորների վարձատրությունը, և ներդրվել է դատավորների բարեվարքության պարբերական գնահատման իրավական շրջանակ: Սակայն դատավորների նախատեսված նեղ մասնագիտացումը չի ապահովվել, Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման մեխանիզմը դեռևս չի գործել, իսկ դատավորների վերապատրաստումների, բարեվարքության ստուգման և դատարանների վերակազմակերպման գործնական ազդեցության վերաբերյալ արդյունքները մնացել են անբավարար:

ՆՊԱՏԱԿ 5. Քրեական արդարադատություն: Քննչական մարմինները համալրվել են ձայնագրման և տեսագրման սարքավորումներով, բարելավվել են պրոբացիոն վերահսկողության ենթակառուցվածքները, ավելացել է աշխատակիցների թիվը, և մշակվել են նոր քրեական օրենսդրության կիրառման ուղեցույցներ: Ներդրվել են նաև դատախազների և քննիչների բարեվարքության գնահատման իրավական մեխանիզմներ: Այնուամենայնիվ, որոշ գործնական արդյունքների գնահատման համար տեղեկատվությունը բավարար չի եղել, իսկ քրեական գործերով դատական վարույթների համար նախատեսված էլեկտրոնային գործիքների ներդրումը շարունակել է կախված մնալ UNICOURT համակարգից:

ՆՊԱՏԱԿ 6. Քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն: Այս ոլորտում օրենսդրական փոփոխություններն անդրադարձել են վճռաբեկ բողոքներին և սահմանել էլեկտրոնային քաղաքացիական արդարադատության իրավական հիմքերը: Վերհանվել են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման ընթացքում առաջացած խնդիրները, և առաջընթաց է արձանագրվել համապատասխան փոփոխությունների նախագծերի մշակման ուղղությամբ: Սակայն պարտավորությունների ապահովման և կորպորատիվ իրավունքի ոլորտներում նախատեսված բարեփոխումները մնացել են անավարտ կամ չլուծված, իսկ էլեկտրոնային գործիքների ներդրումն ուղեկցվել է գործնական դժվարություններով, այդ թվում՝ նախնական իրազեկման և փորձարկման սահմանափակ հնարավորություններով:

ՆՊԱՏԱԿ 7. Վարչական իրավունք և վարչական դատավարություն: Պատասխանատու մարմինները վերհանել են իրավական կարգավորումների կիրառման խնդիրները և մշակել փոփոխությունների նախագծեր, ինչպես նաև առաջընթաց է արձանագրվել էլեկտրոնային արդարադատությանն աջակցող

օրենսդրության ուղղությամբ: Այդուհանդերձ, նախատեսված կարգավորումների մի շարք արդյունքներ չեն հաստատվել, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրքը մշտադիտարկման պահին ընդունված չէր: Չորս միջոցառումներից երկուսը կատարվել են ամբողջությամբ, երկուսը՝ մասամբ, սակայն չի հաստատվել, որ ապահովվել են բոլոր ակնկալվող արդյունքները:

ՆՊԱՏԱԿ 8. Սնանկություն և անվճարունակություն: 2026 թվականի հունիսի 18-ին ընդունվել է Սնանկության նոր օրենսգիրքը, իսկ էլեկտրոնային ընթացակարգերի համար ստեղծվել է օրենսդրական հիմք: Սակայն օրենսգիրքը դեռևս ուժի մեջ չէր մտել, ուստի մշտադիտարկման ժամանակահատվածում հնարավոր չի եղել գնահատել դրա ակնկալվող ազդեցությունը, այդ թվում՝ գործերի քննության տևողության առնվազն 20%-ով կրճատումը և ֆինանսական առողջացման գործերի թվի շուրջ 10%-ով աճը:

ՆՊԱՏԱԿ 9. Վեճերի այլընտրանքային լուծում: Նախատեսված բոլոր ինը միջոցառումները գնահատվել են որպես ամբողջությամբ կատարված: Ստեղծվել է Հայաստանի արբիտրաժի և հաշտարարության կենտրոնը, ընդունվել են համապատասխան իրավական ակտերը, և գործարկվել է հաշտարարության էլեկտրոնային հարթակը: Հաշտարարության կիրառման ծավալների արձանագրված աճը նշանակալի է, սակայն անհրաժեշտ է հավելյալ գնահատել համապատասխան մեխանիզմների հասանելիությունը, կիրառման ծավալները, դրանց արդյունքների կատարման ապահովումը և գործնական արդյունավետությունը:

ՆՊԱՏԱԿ 10. Իրավաբանական օգնություն: Ընդլայնվել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը, և զարգացվել են անհատույց (pro bono) իրավաբանական ծառայությունների տրամադրման իրավական հիմքերը: Յոթ միջոցառումներից հինգը կատարվել են, սակայն հետագա կրճատումներից հետո հանրային պաշտպանների հաստիքների զուտ աճը կազմել է ընդամենը չորս: Զեկույցում մատնանշվում են նաև ծառայությունների մատչելիության և հասանելիության ռիսկերը՝ պայմանավորված հարկային փոփոխություններով, անհատույց ծառայությունների համար նախատեսված ԱԱՀ-ից ազատման արտոնության սահմանափակ կիրառմամբ, ինչպես նաև ծառայությունների որակի և ազդեցության վերաբերյալ բավարար ապացույցների բացակայությամբ:

ՆՊԱՏԱԿ 11. Հարկադիր կատարում: Նոր օրենսդրությունը, ենթակառուցվածքներն ու ավտոմատացման գործիքները նպաստել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության արդիականացմանը: Սակայն միջին վարձատրության արձանագրված 41,5% աճը չի հասել սահմանված 50% թիրախին, իսկ առկա ապացույցները չեն հաստատել կատարողական գործողությունների տևողության առնվազն 40%-ով կրճատման ակնկալվող արդյունքը: Վերապատրաստումների արդյունավետությունը և կադրային ապահովվածության այլ ցուցանիշներ նույնպես բավարար չափով փաստագրված չեն:

ՆՊԱՏԱԿ 12. Այլ ռազմավարական բարեփոխումներ: Իրականացվել են նոտարների նկատմամբ կարգապահական վարույթի ընթացակարգերի և մասնագիտական պատասխանատվության ապահովագրության փոփոխությունները: Ի տարբերություն դրանց՝ նոտարական կատարողական մակագրությունների կիրառման շրջանակի նախատեսված ընդլայնումը, ինչպես նաև Արդարադատության ակադեմիայի և փորձագիտական գործունեության վերաբերյալ իրավական բարեփոխումները մնացել են անավարտ: Զեկույցում ընդգծվում են խնդիրների նախնական վերհանման և գնահատման թերությունները, ինչպես նաև օրինագծերի մշակումը որպես վերջնական արդյունք դիտարկելու խնդրահարույց մոտեցումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտադիտարկման հիմնական եզրահանգումն այն է, որ ընթացակարգային առաջընթացը հաճախ գերազանցել է փաստերով հաստատված ինստիտուցիոնալ կամ հանրության համար շոշափելի արդյունքները: Ուստի զեկույցում առաջարկվում է բարեփոխումների իրականացումը գնահատել ավելի խիստ և փաստահեն մոտեցմամբ՝ հստակ տարբերակելով իրավական ակտերի նախագծերի մշակումը կամ ներկայացումը դրանց ընդունումից, ուժի մեջ մտնելուց և գործնական կիրառումից:

Մեթոդաբանական առաջնահերթություններ: Կիրառել գնահատման միասնական սանդղակ և բազմաբաղադրիչ միջոցառումների յուրաքանչյուր բաղադրիչ գնահատել համապատասխան ցուցանիշների ու հիմնավորող ապացույցների հիման վրա: Ներդնել չափելի արդյունքային ցուցանիշներ, ապահովել ելակետային և համադրելի տվյալների առկայությունը, ինչպես նաև տվյալների պարբերական հրապարակային թարմացումները datairav.am կայքում: Այն դեպքերում, երբ արդյունքները դեռևս հնարավոր չէ գնահատել, հստակ նշել բացակայող ապացույցները և սահմանել, թե ինչպես ու երբ է իրականացվելու դրանց գնահատումը:

Ոլորտային առաջնահերթություններ: Բարելավել էլեկտրոնային արդարադատության համակարգերի հուսալիությունը, օգտագործման հարմարավետությունը, փոխգործունակությունը և չափելի արդյունքները, ամրապնդել նախատեսվող Փաստահավաք հանձնաժողովի անկախության և գործառնական գործունեության երաշխիքները, ապահովել դատավորների նկատմամբ կարգապահական հարցերով որոշումների բողոքարկման մեխանիզմի գործնական կիրառումը, ինչպես նաև վերապատրաստումների և բարեվարքության միջոցառումների արդյունավետությունը գնահատել ըստ արդյունքների, այլ ոչ միայն մասնակցության ցուցանիշների: Ուսումնասիրել նաև վարչական արդարադատության, վեճերի այլընտրանքային լուծման և իրավաբանական օգնության հասանելիությունն ու արդյունավետությունը: Շարունակել սնանկության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկումը նոր օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո և հրապարակել հարկադիր կատարման բարեփոխումների արդյունավետության վերաբերյալ համադրելի տվյալներ:

Մշտադիտարկման մեթոդաբանություն

ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների (2026 թվականի առաջին կիսամյակ) ռազմավարության գործողությունների ծրագրի մշտադիտարկումն իրականացվել է ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի անդամ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ կազմակերպության տարիների ընթացքում մշակված և կիրառված համանման ռազմավարությունների մշտադիտարկման մեթոդաբանության հիման վրա:

Մշտադիտարկման նպատակն էր՝ գնահատել Ռազմավարության գործողությունների ծրագրի՝ 2022 թվականից մինչև 2026 թվականի առաջին կիսամյակն ընդգրկող ժամանակահատվածում իրականացումը, պարզել նախատեսված գործողությունների կատարման աստիճանը և գնահատել դրանց նպաստումը ռազմավարական նպատակների իրականացմանը: Մշտադիտարկումն ընդգրկել է ինչպես գործողությունների ընթացակարգային (քանակական) գնահատումը, այնպես էլ ընտրանքային կարգով՝ որոշ գործողությունների ազդեցության մակարդակի (որակական) գնահատումը:

Գնահատման շրջանակում *ուսումնասիրվել են* դիտարկվող ժամանակահատվածում իրականացվելիք գործողությունները, դրանց համար նախատեսված արդյունքները և Գործողությունների ծրագրով սահմանված ստուգման միջոցները: Քանի որ մշտադիտարկումը միջանկյալ բնույթ է կրել, Ռազմավարության վերջնական արդյունքի ցուցանիշները գնահատման առարկա չեն հանդիսացել: Փոխարենը, ուշադրությունը կենտրոնացվել է առանձին խնդիրների լուծման ընթացքի, նախատեսված գործողությունների և ակնկալվող արդյունքների համապատասխանության, գործողությունների՝ խնդիրները հասցեագրելու արդյունավետության և ռազմավարական ուղղությունների հետագա իրագործման ներուժի գնահատման վրա:

Գնահատումն իրականացվել է երկու հիմնական խմբի ցուցանիշների միջոցով:

Ընթացակարգային (քանակական) գնահատմամբ ուսումնասիրվել է, թե որքանով են փաստացի իրականացվել նախատեսված գործողությունները՝ դրանց կատարման վերաբերյալ ներկայացված կամ հասանելի փաստերի հիման վրա:

Գործողությունները գնահատվել են երեք կատեգորիայով՝

- Կատարված է, եթե հաստատվել է գործողության 91–100 տոկոսի իրականացումը:
- Կատարվել է մասնակի, եթե հաստատվել է գործողության 31–90 տոկոսի իրականացումը:
- Կատարված չէ, եթե նախատեսված աշխատանքների մինչև 30 տոկոսն է իրականացվել, որևէ աշխատանք չի իրականացվել կամ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին տեղեկատվություն չի տրամադրվել:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում մշտադիտարկման խմբի կողմից հաշվարկվել է կատարողական ցուցանիշ, որն իրենից ներկայացնում է «կատարված» գործողությունների հարաբերակցությունը տվյալ ոլորտում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված ընդհանուր գործողությունների թվին:

Ազդեցության մակարդակի (որակական) գնահատմամբ ուսումնասիրվել է, թե որքանով են իրականացված գործողությունները նպաստել ռազմավարական ուղղությունների կամ խնդիրների մակարդակում ակնկալվող արդյունքների ապահովմանը: Այս գնահատումը կատարվել է ընտրանքային կարգով՝ Ռազմավարության՝ անցումային արդարադատության, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման և սահմանադրական բարեփոխումների, ինչպես նաև դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ուղղություններով: Գործողությունները գնահատվել են երեք կատեգորիայով՝

- Իրականացված է, եթե առկա փաստերը վկայում են, որ գործողության իրականացումն ապահովել է ռազմավարական խնդրի մակարդակում ակնկալվող արդյունքը:
- Իրականացված է ոչ ամբողջական, եթե գործողությունը նպաստել է միայն մասնակի արդյունքի ապահովմանը կամ դրա ամբողջական իրականացումը հաստատող բավարար փաստեր չեն ներկայացվել:
- Իրականացված չէ, եթե էական միջոցառումներ չեն ձեռնարկվել, ձեռնարկված միջոցառումները չեն նպաստել ակնկալվող արդյունքին կամ դրա իրականացումը հաստատող փաստեր չեն ներկայացվել:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է կատարողական ցուցանիշ, որն իրենից ներկայացնում է «իրականացված» գործողությունների միջոցով տվյալ ռազմավարական խնդրի մակարդակում միջանկյալ կամ վերջնական արդյունքի նվաճումը:

Այսպիսով, ընթացակարգային գնահատումը հնարավորություն է տվել արձա-

նագրելու նախատեսված գործողությունների կատարման աստիճանը, իսկ որակական գնահատումը՝ պարզելու, թե դրանց իրականացումն ինչ չափով է նպաստել համապատասխան ռազմավարական խնդիրների լուծմանը:

Տվյալների հավաքագրման և վերլուծության համար կիրառվել է քանակական և որակական տեղեկատվության համադրման մոտեցում: Մշտադիտարկումն իրականացվել է առաջնային և երկրորդային աղբյուրների հիման վրա՝ ներառելով ՀՀ արդարադատության նախարարությանը և այլ իրավասու մարմիններին ուղղված տեղեկատվական հարցումների պատասխանները, պետական մարմինների հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը, իրավական ակտերի և դրանց նախագծերի վերլուծությունը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ քննարկումներն ու հարցազրույցները:

Մասնավորապես, կազմակերպվել է ֆոկուս խմբային քննարկում՝ գործողությունների իրականացման համար պատասխանատու պետական մարմինների և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Բացի այդ, անցկացվել են առանձին հարցազրույցներ՝ ոլորտի շահագրգիռ անձանց հետ:

Մշտադիտարկման արդյունքների հիման վրա մշակվել է Ռազմավարության գործողությունների ծրագրի 2022–2026 թվականների (մինչև 2026 թվականի առաջին կիսամյակը ներառյալ) իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույցը: Զեկույցի նախագիծը քննարկվել է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Զուգահեռաբար, Զեկույցի նախագիծը ներկայացվել է գործողությունների կատարման համար պատասխանատու պետական մարմիններին և այլ շահագրգիռ կառույցներին՝ կարծիքների և առաջարկությունների ստացման նպատակով: Ստացված դիտարկումների և առաջարկությունների մի մասը ընդունվել և ներառվել է զեկույցի վերջնական տարբերակում:

ՆՊԱՏԱԿ 1. «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ու արդիականացում

Նպատակի հիմնական ուղղությունն արդարադատության ոլորտում իրականացվող գործընթացների թվայնացումն է՝ դատական գործերի քննությունից և դատավարական փաստաթղթերի ներկայացումից մինչև դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, իրավապահ և

հարակից պետական մարմինների էլեկտրոնային համակարգերի կատարելագործում, ինչպես նաև արխիվային նյութերի ու նոտարական ծառայությունների թվայնացում: Նախատեսված փոփոխությունների նպատակը ոչ միայն էլեկտրոնային համակարգերի ստեղծումն է, այլև դրանց փոխկապակցված, արդյունավետ և հանրության համար հասանելի աշխատանքի ապահովումը:

Դատական գործերի էլեկտրոնային կառավարում: Քաղաքացիական և վարչական գործերով ներդրվել են «Էլեկտրոնային դատարան» համակարգի համապատասխան մոդուլները, որոնք հնարավորություն են տալիս դատավարական փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, հետևել գործի ընթացքին և հասանելիություն ունենալ դատավարության նյութերին: Քաղաքացիական գործերով համակարգը նախատեսում է էլեկտրոնային գործընթաց՝ հայցի ներկայացումից մինչև եզրափակիչ դատական ակտի հրապարակումն ու կատարողական թերթի տրամադրումը: Վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկվել է 2025 թվականի օգոստոսի 25-ին, իսկ ներկայացված տվյալների համաձայն՝ վարչական գործերով դիմումների ավելի քան 70 տոկոսը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով:

Միաժամանակ, քաղաքացիական գործերով համակարգի գործնական կիրառման ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրա առկայությունը դեռևս չի նշանակում, որ այն լիարժեքորեն ապահովում է օգտատերերի կարիքները: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են տեխնիկական խնդիրների լուծման ուշացումներ, անհրաժեշտ փաստաթղթերի և ապացույցների որոնման ու հասանելիության դժվարություններ, ինչպես նաև դեպքեր, երբ համակարգում կցված ապացույցը տեսանելի չի եղել դատարանի համար, և դրա առկայությունը պարզվել է փաստաբանի կողմից հատուկ մատնանշելուց հետո: Այս հանգամանքները կարևորում են ոչ միայն համակարգի տեխնիկական գործարկումը, այլև դրա հուսալիության, օգտագործման հարմարավետության և դատավարական նյութերի ամբողջական հասանելիության ապահովումը:

Սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկվել է e-bankruptcy.am հարթակում: Համակարգի գործարկման հետ կապված՝ օրենքով նախատեսված կարգավորումները ուժի մեջ են մտել 2026 թվականի ապրիլի 27-ից: Համակարգը նախատեսում է փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացում, գործի նյութերին ծանոթացում, ծանուցումներ և սնանկության վարույթի որոշ գործընթացների, այդ թվում՝ աճուրդների էլեկտրոնային իրականացում: Նոր գործերով դատական ակտերն ու գործի ընթացքի վերաբերյալ հանրային տեղեկատվու-

թյունը հրապարակվում են նաև cases.court.am հարթակում: Սակայն գործնականում պահպանվում են խնդիրներ. համակարգում չգրանցված անձանց ծանուցելու համար կարող է անհրաժեշտ լինել կիրառել նաև ոչ էլեկտրոնային եղանակ, իսկ գույքի իրացման բոլոր գործընթացների թվայնացումը դեռևս ամբողջական չէ: Այսպիսով, համակարգի ներդրումը դեռևս չի վերացրել որոշ գործողությունների զուգահեռ՝ էլեկտրոնային և թղթային իրականացման անհրաժեշտությունը:

Քրեական գործերով դատական քննության էլեկտրոնային մոդուլի ներդրման և այն դատավարության մասնակից մարմինների գործող համակարգերի հետ համակցման ուղղությամբ առկա են չլուծված խնդիրներ: Մասնավորապես, քրեական գործերով նախատեսված էլեկտրոնային համակարգերի փոխգործակցությունն ամբողջությամբ ապահովված չէ: ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած հիմնավորմամբ՝ այս հարցի լուծումը կապվում է միասնական դատական կառավարման UNICOURT համակարգի ներդրման հետ: Միևնույն ժամանակ, մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային կառավարման e-criminal case համակարգն արդեն կիրառվում է. 2023 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անցում է կատարվել մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարմանը:

Դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակում և էլեկտրոնային հասանելիություն: Ռազմավարությամբ նախատեսված է հանրության համար հասանելի առցանց համակարգով հրապարակել դատարանների գործունեությունն ամփոփող զեկույցներ և վիճակագրություն, ինչպես նաև կատարելագործել դատական գործերի էլեկտրոնային մակագրության ու բաշխման և դատական ակտերի պաշտոնական հրապարակման համակարգերը: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ հրապարակվող դատական վիճակագրությունը բավարար չէ ռազմավարությամբ նախատեսված քանակական արդյունքների ապահովումը լիարժեքորեն ստուգելու համար: Հետևաբար, էլեկտրոնային տվյալների հրապարակման առկայությունից բացի, կարևոր է նաև դրանց ամբողջականությունը և արդյունքների գնահատման համար բավարար տեղեկատվության հասանելիությունը:

Արդարադատության ոլորտի տարբեր էլեկտրոնային համակարգերը մեկ հարթակից հասանելի դարձնելու և դրանց փոխկապակցվածությունն ապահովելու նպատակով նախատեսվել է «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական հարթակը: Դրա հետ կապված աշխատանքների շրջանակում դիտարկվել են նաև դատական գործերի բաշխման և դատական ակտերի հրա-

պարակման համակարգերի արդիականացումը, տեղեկատվական անվտանգության գործիքները և օգտատերերի համար հասանելիության պարզեցումը: Սակայն համակարգերի միջև լիարժեք կապի ապահովումը շարունակում է մնալ ընդհանուր թվայնացման կարևոր խնդիր:

Հաշտարարության և հրապարակային ծանուցումների թվայնացում: Հաշտարարության ոլորտում նախատեսված էլեկտրոնային գործիքները պետք է հեշտացնեն հաշտարարության գործընթացների իրականացումն ու դրանց կապը դատական վարույթի հետ: Մշտադիտարկման ընթացքում, սակայն, արձանագրվել են հաշտարարության էլեկտրոնային հարթակի և քաղաքացիական դատավարության համակարգի միջև փոխգործակցության խնդիրներ: Մասնավորապես, հաշտարարները չեն կարողանում համապատասխան համակարգում ինքնուրույն մուտք գործել քաղաքացիական գործի նյութեր կամ ներկայացնել հաշտության համաձայնությունը, իսկ համակարգում բացակայում է որոշ վարույթներ առանց քննության թողնելու համար անհրաժեշտ գործառույթը: Հաշտարարության ոլորտի ներկայացուցիչները բարձրացրել են այդ խնդիրները, իսկ Արդարադատության նախարարությունը հայտնել է համակարգը բարելավելու մտադրության մասին:

Հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքը արդիականացվել է, և նորացված կայքը գործարկվել է 2025 թվականի ապրիլի 1-ին՝ նախատեսված ժամկետից ուշ: Այնուամենայնիվ, անհատական և հրապարակային ծանուցումների միասնական համակարգի ստեղծումը և անձնական ծանուցումների հետ կապված գործընթացների լիարժեք ինտեգրումը դեռևս ապահովված չեն: Սա սահմանափակում է ծանուցումների ոլորտում միասնական էլեկտրոնային մեխանիզմի ձևավորումը:

Պրոբացիայի, հարկադիր կատարման և քրեակատարողական համակարգերի թվայնացում: Պրոբացիայի ոլորտում ներդրվել է e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը: Հարկադիր կատարումն ապահովող ծառայության համակարգերի կատարելագործման շրջանակում նախատեսվել և ներդրվել են գործերի ինքնաշխատ բաշխման, կատարողական վարույթների միավորման, փոխանցման, բաշխման և ավարտման, ինչպես նաև օգտատերերի անձնական գրասենյակի ու էլեկտրոնային ծառայությունների գործիքներ: Դրանց թվում են որոնման և վճարման ու վարույթը փակելու հետ կապված հարթակները, ինչպես նաև միջգերատեսչական էլեկտրոնային կապերը: Ներկայացված տվյալների համաձայն՝ 2024 թվականին համակարգի օգտատերերի թիվը կազմել է շուրջ 20,000:

Քրեակատարողական համակարգում e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել, այդ թվում՝ մշակվել է տեխնիկական առաջադրանք: Սակայն գործընթացների վերլուծության անհրաժեշտությունից ելնելով՝ առաջ է եկել նոր համակարգի մշակման հարցը: Այսպիսով, տարբեր ոլորտներում թվային գործիքների ներդրմանը զուգահեռ՝ պահպանվում է գործող համակարգերի արդիականացման և դրանց գործառույթներն ամբողջական դարձնելու անհրաժեշտությունը:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացում: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացման աշխատանքների արդյունքում ձևավորվել է թվային արխիվ, և, ըստ մշտադիտարկման արդյունքների, արխիվային նյութերն ամբողջությամբ սկանավորվել ու թվայնացվել են: Միաժամանակ, պետական ռեգիստրում նոր սուբյեկտների գրանցման գործընթացներն իրականացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով, ինչի շնորհիվ նոր գրանցվող սուբյեկտների գործերը ձևավորվում են թվային եղանակով:

Նոտարական ծառայությունների թվայնացում: Ռազմավարությամբ նախատեսվել է ստեղծել էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կտա նոտարի կողմից էլեկտրոնային եղանակով վավերացնել ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագրերը և փաստաթղթերի փոխանակումը կազմակերպել թվային եղանակով՝ ներառյալ համապատասխան պարտավորությունների հարկադիր կատարման դեպքում կատարողական մակագրության թերթերի էլեկտրոնային տրամադրումը: Նախատեսվել է նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով որոշ միակողմանի գործարքների վավերացման և փաստաթղթերի փոխանցման համակարգի ներդրում: Մշտադիտարկման տվյալներով՝ այս համակարգերի մշակման և գործարկման գործընթացները չեն իրականացվել, ուստի նոտարական ծառայությունների այդ հատվածներում թվայնացման նախատեսված հնարավորությունները չեն ապահովվել:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ռազմավարության շրջանակում արդարադատության ոլորտի մի շարք գործառույթների համար ներդրվել և գործարկվել են էլեկտրոնային համակարգեր, այդ թվում՝ դատական գործերի կառավարման առանձին մոդուլներ, մինչդատական քրեական վարույթի էլեկտրոնային համակարգը, պրոբացիայի և հարկադիր կատարման ծառայությունների համակարգերը, ինչպես նաև իրավաբանական անձանց պե-

տական ռեգիստրի թվային արխիվը: Միաժամանակ, բոլոր նախատեսված գործառույթների իրականացումը և էլեկտրոնային համակարգերի ամբողջական փոխգործակցությունը դեռևս ապահովված չեն: Մշտադիտարկմամբ արձանագրվել են նաև առանձին համակարգերի գործնական կիրառման, ընթացակարգերի ամբողջական թվայնացման և էլեկտրոնային գործիքների կատարելագործման հետ կապված խնդիրներ: Հետևաբար, համակարգերի ներդրման փաստը դեռևս ինքնին չի նշանակում ռազմավարությամբ նախատեսված բոլոր արդյունքների լիարժեք ապահովում:

ՆՊԱՏԱԿ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառում՝ փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտմամբ

Ռազմավարության Նպատակ 2-ը միտված է փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցի միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտմանը, դրանց պատճառների և մեխանիզմների ուսումնասիրությանը, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման միջոցների առաջարկմանը:

Ռազմավարությամբ նախատեսված ժամկետում փաստահավաք կառույցի ձևավորումն ապահովված չի եղել: Հետագայում՝ 2024 թվականի դեկտեմբերին, ընդունվել են «Հանրային խորհրդի մասին» օրենքում փոփոխություններ, որոնցով ստեղծվել է Փաստահավաք հանձնաժողովի ձևավորման իրավական հիմքը: Այսպիսով, օրենսդրական հիմքի ստեղծմանն ուղղված գործողության ընթացակարգային արդյունքն ապահովվել է, սակայն՝ Ռազմավարությամբ սահմանված ժամկետից հետո:

2025 թվականին հայտարարվել է հանձնաժողովի անդամների ընտրության մրցույթ, որը, բավարար թվով թեկնածուների կողմից սահմանված նվազագույն շեմը չհաղթահարելու պատճառով, համարվել է չկայացած: Մշտադիտարկման իրականացման պահին նոր մրցույթ չէր հայտարարվել, հանձնաժողովը չէր ձևավորվել և փաստահավաք գործունեություն չէր իրականացրել: Հետևաբար, հնարավոր չի եղել ապահովել կամ գնահատել Ռազմավարությամբ սահմանված՝ իրավախախտումների դեպքերի առնվազն 50 տոկոսի բացահայտման, բացահայտված դեպքերի առնվազն 30 տոկոսի համար իրավունքների վերականգնման միջոցներ առաջարկելու և միջանկյալ ու եզրափակիչ զեկույցներ ներկայացնելու արդյունքները:

Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ հանձնաժողովի ձևավորման իրավական հիմքի առկայությունն ինքնին բավարար չէ դրա արդյունավետ գործունեությունն ապահովելու համար: Գործող ինստիտուցիոնալ մոդելում առկա են հանձնաժողովի անկախության, ֆինանսական և վարչական ինքնուրույնության, անդամների մասնագիտական ընտրության, բարեվարքության նախնական գնահատման, տեղեկատվության անմիջական հասանելիության, արտաքին վերահսկողության և գործառութային կարողությունների ապահովման հետ կապված սահմանափակումներ: Մասնավորապես, հանձնաժողովը նախատեսված է որպես Հանրային խորհրդի կազմում գործող ժամանակավոր հանձնաժողով, իսկ դրա կազմակերպական և որոշ գործառութային գործընթացներ փոխկապակցված են Հանրային խորհրդի հետ: Միաժամանակ, հանձնաժողովի լայն մանդատի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական, հետազոտական, տեխնիկական և նյութական ռեսուրսների ապահովման ամբողջական ու հստակ երաշխիքները բավարար չափով սահմանված չեն:

Այսպիսով, օրենսդրական մակարդակում ստեղծվել է փաստահավաք կառույցի ձևավորման հնարավորություն, սակայն այն փաստացի չի ձևավորվել և չի սկսել իր գործունեությունը: Բացի այդ, գործող իրավական մոդելի վերաբերյալ որակական ուսումնասիրությամբ արձանագրված սահմանափակումները հիմք չեն տալիս եզրակացնելու, որ առկա են Նպատակի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ բոլոր ինստիտուցիոնալ երաշխիքները:

ՆՊԱՏԱԿ 3. Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում

Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և մասնագիտական հանձնաժողովի գործունեության ապահովում

Ռազմավարական նպատակի հիմնական ուղղություններից մեկն է հանդիսացել սահմանադրական բարեփոխումների իրականացումը՝ մասնագիտական գործընթացի կազմակերպման, հայեցակարգի նախագծի և դրա հիման վրա սահմանադրական փոփոխությունների նախագծի մշակման միջոցով: Ինչով պայմանավորված նախատեսվել էր ապահովել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և մասնագիտական հանձնաժողովի գործունեությունը:

Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը շարունակում է իր գործունեությունը Վարչապետի 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 111-Ա որոշմամբ հաստատված աշխատակարգի հիման վրա, ինչը ապահովում է առնվազն 1.5 տարի գործելու պահանջը: Մասնագիտական հանձնաժողովի կազմը պետք է ներառեր

առնվազն 5 անդամ: Այնուամենայնիվ, որոշակի ժամանակահատվածում Հանձնաժողովի փաստացի կազմը բաղկացած է եղել 3 անդամից: Հանձնաժողովի սկզբնական կազմի 5 անդամների լիազորությունների ժամկետը լրացել է 2022 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ հետագայում կազմակերպված մրցութային գործընթացների արդյունքում չի հաջողվել ապահովել Հանձնաժողովի՝ առնվազն 5 անդամից բաղկացած ամբողջական կազմի ձևավորումը: Կազմակերպվել է ավելի քան 30 հանրային քննարկում՝ Երևանում, Շիրակի, Լոռու և Վայոց ձորի մարզերում: Սակայն հարցումներին մասնակցել է շուրջ 300 անձ՝ նախատեսված առնվազն 500-ի փոխարեն: Մասնագիտական հանձնաժողովի կազմը նույնպես ամբողջությամբ չի համապատասխանել նախատեսված չափանիշներին. որոշ ժամանակ այն բաղկացած է եղել երեք անդամից, իսկ մրցութային գործընթացներով չի հաջողվել ապահովել նախատեսված ամբողջական կազմը:

Ուսումնասիրության ընթացքում իրականացված հարցազրույցների համադրումը ցույց է տվել, որ Խորհրդի և Հանձնաժողովի գործառույթների ու պատասխանատվության սահմանները բավարար չափով հստակ չեն եղել: Քաղաքական և մասնագիտական դերերի տարանջատման փորձը գործնականում միշտ չէ, որ ապահովել է արդյունավետ համագործակցություն: Խորհրդի վրա դրվել են նաև այնպիսի խնդիրներ, որոնք դուրս են եղել դրա հիմնական առաքելությունից, մինչդեռ մասնագիտական աջակցությունն ու մարդկային ռեսուրսները սահմանափակ են եղել: Միաժամանակ, զեկույցը զգուշացնում է, որ Հանձնաժողովի գործունեության ընդհատումները չի կարելի ինքնաբերաբար վերագրել միայն ինստիտուցիոնալ մոդելին. պետք է հաշվի առնել նաև թեկնածուների բացակայությունն ու այլ կազմակերպական հանգամանքներ:

Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի և նախագծի մշակում

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը պետք է մշակվեր 2022 թվականի չորրորդ եռամսյակում, սակայն այն չի հրապարակվել և մշտադիտարկման ընթացքում հասանելի չի եղել: Նախարարության հետագա հաշվետվությունները չեն հաստատել գործողության ավարտը: Հարցազրույցների մասնակիցների տեղեկություններով՝ առանձին գաղափարներ կամ գլուխներ կարող էին մշակված լինել, սակայն միասնական և ամբողջական փաստաթուղթ չի ձևավորվել:

Նույն խնդիրը վերաբերում է սահմանադրական փոփոխությունների նախագ-

ծին, որի մշակման վերջնաժամկետը 2023 թվականի երկրորդ եռամսյակն էր: 2026 թվականի սեպտեմբերին ամբողջական և պատրաստ նախագիծը հասանելի չէր: Ուսումնասիրության ընթացքում իրականացված հարցազրույցների մասնակիցները նշել են, որ կարող էին լինել առանձին դրույթներ կամ աշխատանքային տարբերակներ, սակայն նախագծի մշակման ընթացքը, բովանդակությունը և պատասխանատվության բաշխումը բավարար չափով թափանցիկ չէին:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ առկա խնդիրները կապվում են ոչ միայն փաստաթղթերի բացակայության, այլև գործընթացի կառավարման, դերերի ոչ բավարար տարանջատման, մասնագիտական աջակցության սահմանափակության և հանրային մասնակցության կազմակերպման հետ: Միաժամանակ, հարցազրույցներում նշվել է, որ առկա է մասնագիտական ներուժ՝ որակյալ սահմանադրական տեքստ մշակելու համար, եթե լուծվեն գործընթացի կազմակերպական խնդիրները:

Ընտրական օրենսդրության փոփոխությունները և գնահատում

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ի տարբերություն սահմանադրական բարեփոխումների՝ ընտրական օրենսդրության ուղղությամբ արձանագրվել է հստակ արդյունք: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումների և 2021 թվականի ընտրությունների ընթացքում հայտնաբերված խնդիրների հիման վրա մշակված փոփոխությունների փաթեթի արդյունքում 2024 թվականի դեկտեմբերի 5-ին Ազգային ժողովն ընդունել է Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող սահմանադրական օրենքը: Գործողությունը գնահատվել է կատարված, իսկ ազդեցության գնահատմամբ՝ ռազմավարական արդյունքը՝ իրականացված:

Ընթացակարգային գնահատմամբ չորս գործողություններից մեկը կատարված է, մեկը՝ մասնակի, երկուսը՝ չկատարված: Այսպիսով, նպատակ 3-ի հիմնական չլուծված հարցը սահմանադրական բարեփոխումների ամբողջական գործընթացի վերագործարկումն է՝ հայեցակարգի և նախագծի պատրաստմամբ, Խորհրդի և Հանձնաժողովի դերերի հստակեցմամբ, մասնագիտական աջակցության ապահովմամբ և հանրային բովանդակային քննարկումների կազմակերպմամբ:

ՆՊԱՏԱԿ 4. Դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովում

Նպատակ 4-ի շրջանակում նախատեսվել էր ապահովել դատական համակարգի ինստիտուցիոնալ և գործառնական բարեփոխումների շարունակականությունը՝ դատարանների կառուցվածքի և մասնագիտացման կատարելագործման, դատավորների վարձատրության բարելավման, մասնագիտական կարողությունների զարգացման և բարեվարքության մեխանիզմների ներդրման միջոցով: Ակնկալվող արդյունքներն ուղղված էին դատական համակարգի արդյունավետության բարձրացմանը, դատավորների մասնագիտական և բարեվարքության չափանիշների ամրապնդմանը և դատական գործերի քննության արդյունավետության բարելավմանը:

Նպատակի շրջանակում իրականացված միջոցառումները տարբեր արդյունքներ են ապահովել: Երևանում առաջին ատյանի քաղաքացիական և քրեական դատարանների առանձին ձևավորման, բարձր ատյանների դատավորների վարձատրության վերանայման և դատավորների բարեվարքության պարբերական ուսումնասիրության կառուցակարգի ներդրման ուղղությամբ նախատեսված իրավական փոփոխություններն ընդունվել են: Միաժամանակ, դատավորների ենթամասնագիտացումների կամ նոր մասնագիտացված դատարանների ստեղծման ուղղությամբ նախատեսված արդյունքը չի ապահովվել, իսկ հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումների որակական արդյունքների ամբողջական գնահատման համար բավարար տվյալներ առկա չեն:

Երևանում առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների ձևավորումն իրականացվել է 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-575-Ն սահմանադրական օրենքով կատարված փոփոխությունների հիման վրա: Առանձին դատարանների ստեղծմամբ ապահովվել է դատական համակարգի կազմակերպական կառուցվածքի նախատեսված փոփոխությունը: Սակայն առկա տվյալները բավարար չեն գնահատելու դրա երկարաժամկետ ազդեցությունը գործերի քննության ժամկետների, դատավորների ծանրաբեռնվածության և արդարադատության որակի վրա:

Դատավորների ենթամասնագիտացումների կամ մասնագիտացված դատարանների նախատեսման ուղղությամբ գործողությամբ նախատեսված իրավական ակտերի նախագիծը չի մշակվել, և առնվազն մեկով ավելացման ցուցանիշը չի ապահովվել: Արդարադատության նախարարության հաշվետվությունում ներկայացված՝ դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված այլ մի-

ջոցառումները, այդ թվում՝ փոքր հայցապահանջների որոշ գործերի քննությունը նոտարներին վերապահելը և վարչական դատավարության կարգավորումների փոփոխությունները, կարող են նպաստել դատական համակարգի արդյունավետությանը, սակայն չեն համարվում նախատեսված գործողության կատարում, քանի որ չեն հանգեցրել նոր մասնագիտացված դատարանի կամ դատավորների ենթամասնագիտացման ստեղծմանը:

Բարձր ատյանների դատավորների վարձատրության վերանայման ուղղությամբ 2022 թվականի հունիսի 9-ին ընդունված ՀՕ-264-Ն օրենքով Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորների համար սահմանվել է պաշտոնային դրույքաչափի 80 տոկոսի չափով հավելավճար, իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների համար՝ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով հավելում՝ ստաժի համար նախատեսված հավելավճարից բացի: Այսպիսով, վարձատրության վերանայման ուղղությամբ նախատեսված օրենսդրական արդյունքն ապահովվել է: Միաժամանակ, առկա տվյալները չեն թույլ տալիս գնահատել դրա երկարաժամկետ ազդեցությունը դատավորի մասնագիտության գրավչության, կադրերի պահպանման կամ դատական համակարգի արդյունավետության վրա:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումների շրջանակում 2023 թվականին կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ վերապատրաստվել է 8, իսկ հակակոռուպցիոն քաղաքացիահիրավական գործերի քննության մասնագիտացմամբ՝ 4 դատավոր: Ըստ ներկայացված տվյալների՝ վերապատրաստվել է դատավորների 80 տոկոսը՝ ապահովելով քանակական ցուցանիշը: Սակայն վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքները մշտադիտարկման խմբին չեն ներկայացվել և չեն հրապարակվել: Հետագա հաշվետվություններում համապատասխան տվյալների բացակայությունը նույնպես սահմանափակում է վերապատրաստումների մասնագիտական արդյունքների և դատական գործունեության վրա դրանց ազդեցության գնահատումը:

Դատավորների բարեվարքության պարբերական ուսումնասիրության կառուցակարգը ներդրվել է 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված օրենսդրական փոփոխություններով: Սահմանվել են ընթացիկ ուսումնասիրության իրականացման ժամկետները, հարցաթերթիկի ներկայացման էլեկտրոնային ձևաչափը և դրա լրացման կարգը: Ուսումնասիրության իրականացումը վերապահվել է Կո-

ռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որը ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն: Այդ եզրակացությունները հրապարակման ենթակա չեն: Հետևաբար, իրավական հիմքերի և ընթացակարգի ներդրումը հաստատված է, սակայն կառուցակարգի գործնական արդյունավետության գնահատումը կախված է դրա կիրառման արդյունքների և դրանց հիման վրա ձեռնարկված միջոցների վերաբերյալ բավարար տեղեկատվության առկայությունից:

Դատարանների պայմաններ, դատավորների ընտրություն և վերապատրաստում

Հակակոռուպցիոն դատարանների համար շենքային և նյութատեխնիկական պայմանների ապահովման ուղղությամբ նախարարության հաշվետվությամբ նշվել է, որ համապատասխան շինարարական և նյութատեխնիկական աշխատանքներն ավարտվել են 2024 թվականի դեկտեմբերին: Գործողությունը գնահատվել է կատարված, սակայն զեկույցում նշվում է, որ աշխատանքների ծավալի և կոնկրետ արդյունքների մասին մանրամասն տվյալներ չեն ներկայացվել:

Դատավորների նշանակման կարգի վերանայման արդյունքում ներդրվել է հատուկ կարգով որակավորման ստուգման միջոցով թեկնածուների ցուցակը համալրելու հնարավորություն՝ առանց Արդարադատության ակադեմիայում պարտադիր ուսուցման: Ընթացակարգային գնահատմամբ գործողությունը կատարված է: Սակայն որակական գնահատումը բացահայտել է մտահոգություններ,քանզի նոր ընթացակարգը ներդրվել է առանց պատշաճ հանրային քննարկման, իսկ համապատասխան դրույթը նախագծի հանրային քննարկման տարբերակում չի եղել և ավելացվել է խորհրդարանական փուլում:

Իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ առկա տվյալները բավարար չեն ապացուցելու՝ արդյոք հատուկ կարգով անցկացվող քննությունները երաշխավորում են անհրաժեշտ մասնագիտական մակարդակ այն թեկնածուների համար, որոնք չեն անցնում Արդարադատության ակադեմիայի ուսուցումը: 2023 թվականին հատուկ կարգով անցկացվել է յոթ որակավորման ստուգում, իսկ ընդհանուր ընթացակարգով՝ երկու: Հետևաբար, գործիքի ներդրումը հաստատված է, բայց դրա հիմնավորվածությունն ու ազդեցությունը թեկնածուների որակի վրա՝ ոչ ամբողջությամբ:

Հակակոռուպցիոն դատարանի դատավորների վերապատրաստումների մասով 2023 թվականին համապատասխան դասընթացներին մասնակցել է դա-

տավորների նախատեսված շրջանակի զգալի մասը՝ զեկույցում նշված տվյալներով շուրջ 80 տոկոս: Սակայն վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության հարցումների արդյունքները չեն ներկայացվել: Այդ պատճառով քանակական ընդգրկվածությունը հաստատված է, սակայն մասնագիտական կարողությունների կամ դատական գործունեության որակի վրա ազդեցությունը գնահատելի չէ:

Հակակոռուպցիոն դատարանների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական միջոցների ապահովում

ՀՀ ԱՆ կողմից հրապարակված Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների կատարման 2024 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությամբ գործողությունը համարվում է կատարված: Ըստ հաշվետվության՝ հակակոռուպցիոն դատարանը գործում է Երևան քաղաքի Թբիլիսիյան խճուղի 3/9 հասցեում, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը գործում է Արա Սարգսյան 5/1 հասցեում:

Հաշվետվությամբ ներկայացվում է նաև, որ դատարանի ստեղծումից ի վեր՝ այն գործել է Թբիլիսիյան խճուղի 3/9 հասցեում գտնվող վարչական շենքում, որի շենքային պայմանները և տարածքի բարեկարգման նպատակով ՝ 2022-2024 թթ իրականացված շինարարական և նյութատեխնիկական ապահովման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2024 թ դեկտեմբեր ամսին:

Դատավորների նշանակման օրենսդրական կարգի վերանայում՝ բարձրացնելով դատավորների հավակնորդների թեկնածուների որակավորման գրավոր քննության և բանավոր հարցազրույցի արդյունքների արձանագրման օբյեկտիվությունը և նախատեսելով դատավորների ներգրավման նոր ընթացակարգեր

Չնայած գործողությունը գնահատվել է կատարված՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ի ՀՕ-575-Ն սահմանադրական օրենքի ընդունման և 2023 թվականի հունիսի 15-ից ուժի մեջ մտնելու հիմքով, դրա կիրառումը վեր է հանել մի շարք խնդիրներ: Մասնավորապես, դատավորների թեկնածուների որակավորման ստուգման հատուկ կարգը ներդրվել է առանց հանրային քննարկման, իսկ դրա միջոցով ցուցակում ընդգրկվող անձինք ազատվել են Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու պահանջից՝ առանց քննությունների բարդության և այդ բացառության հիմնավորվածության վերաբերյալ բավարար տվյալների առկայության:

Միաժամանակ, մշտադիտարկումը ցույց է տվել, որ հատուկ ընթացակարգը կիրառվել է ավելի հաճախ, քան ընդհանուր ընթացակարգը. 2023 թվականին հատուկ կարգով անցկացվել է որակավորման յոթ, իսկ ընդհանուր կարգով՝ ընդամենը երկու ստուգում:

Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսում

ՀՀ Դատական օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխությունները: Օրենսգրքի հոդված 156.1-ով նախատեսված է Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումը բողոքարկելը[3]:

Միևնույն ժամանակ, սակայն, հոդվածի եզրափակիչ և անցումային դրույթներով նախատեսված է, որ հոդվածով նախատեսված կարգավորումները ուժի մեջ են մտնում սահմանված կարգով Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին[4]:

Այս փոփոխությունների բովանդակությունը ենթադրում է, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրականացնելու է Խորհրդի 4 անդամ ընդգրկող կազմը: Խորհրդի նշված կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր և ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական թեկնածու: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է Խորհուրդը՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկված անդամների կազմով:

Այնուհանդերձ, օրենսդրական փոփոխություններից հետո մինչ օրս Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան նորմատիվ ակտը ընդունված չէ և բողոքարկման մեխանիզմը հաստատված չէ:

Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշռի վերանայում

3 ՀՀ Դատական օրենսգիրք, Հոդված 156-1

4 ՀՀ Սահմանադրական օրենքը , ընդունված 2023 թվականի հոկտեմբերի 25-ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ https://www.arlis.am/hy/acts/185501

2026 թվականի մարտի 4-ի փոփոխություններով Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը սահմանվել է 11 անդամից՝ վեց դատավոր և հինգ ոչ դատավոր անդամ: 2026 թվականի հուլիսի 3-ին ընտրվել են հանձնաժողովի նոր երեք անդամներ: Չնայած օրենսդրական փոփոխությանը՝ զեկույցը մատնանշում է քաղաքացիական հասարակության իրական ներկայացվածության վերաբերյալ մտահոգություններ: Չկան բավարար երաշխիքներ, որ ոչ դատավոր անդամներն իսկապես ներկայացնում են քաղաքացիական հասարակության շահերը, իսկ ընտրության գործընթացի արտաքին վերահսկողությունն ու հաշվետվողականությունը սահմանափակ են:

Դատավորների բարեվարքության պարբերական ուսումնասիրության կառուցակարգը ներդրվել է 2024 թվականի ապրիլի 11-ի օրենսդրական փոփոխություններով: Առաջին նշանակումից հետո ուսումնասիրությունը նախատեսվում է վեցերորդ տարում, և այն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Իրավական մեխանիզմի ներդրումը հաստատված է, սակայն խորհրդատվական եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, ինչն ավելի է դժվարացնում ազդեցության գնահատումը: Զեկույցն առաջարկում է պարբերաբար հրապարակել ընդհանրացված և անանունացված տվյալներ ուսումնասիրությունների քանակի, ընդհանուր արդյունքների և ձեռնարկված միջոցների մասին:

Այս նպատակի հիմնական դասը՝ դատական բարեփոխումները չեն կարող չափվել միայն օրենքների ընդունմամբ կամ նյութատեխնիկական միջոցներով: Անհրաժեշտ է գնահատել նոր ընթացակարգերի իրական կիրառելիությունը, թափանցիկությունը, անկախությունը, բողոքարկման փաստացի հասանելիությունը և վերապատրաստումների արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Նպատակ 4-ի շրջանակում արձանագրվել են դատական համակարգի կազմակերպական կառուցվածքի, դատավորների վարձատրության և բարեվարքության վերահսկողության կառուցակարգերի բարելավումներ: Միաժամանակ, մասնագիտացման ուղղությամբ նախատեսված արդյունքը չի ապահովվել, իսկ վերապատրաստումների և բարեվարքության ուսումնասիրությունների գործնական ազդեցության գնահատումը սահմանափակվում է արդյունքների վերաբերյալ բավարար տվյալների բացակայությամբ:

ՆՊԱՏԱԿ 5. Քրեաիրավական ոլորտի բարեփոխումներ

Նպատակ 5-ի շրջանակում նախատեսվել էր բարելավել քրեաիրավական համակարգի արդյունավետությունն ու ինստիտուցիոնալ կարողությունները՝ կատարելագործելով քննչական գործողությունների իրականացման պայմանները, տեխնիկական հագեցվածությունը և մարդկային ռեսուրսները, ապահովելով նոր քրեական օրենսդրության կիրառմանն ուղղված մեթոդական աջակցություն և շարունակական վերապատրաստումներ, ինչպես նաև ներդնելով դատախազների և քննիչների բարեվարքության գնահատման մեխանիզմներ: Ակնկալվող արդյունքներն ուղղված էին քրեական վարույթների արդյունավետության բարձրացմանը, քննչական գործողությունների պատշաճ իրականացմանը և քրեաիրավական համակարգում մասնագիտական ու բարեվարքության չափանիշների ամրապնդմանը:

Քրեաիրավական ոլորտի բարեփոխումների շրջանակում նախատեսված միջոցառումների մեծ մասի քանակական մակարդակում իրականացման վերաբերյալ արձանագրվել է դրական արդյունք: Նախաքննության մարմիններն ապահովվել են քննչական գործողությունների տեսաձայնագրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, Պրոբացիայի ծառայությունը՝ էլեկտրոնային հսկողության սարքավորումներով և համապատասխան ենթակառուցվածքներով, իսկ նախաքննության մարմինների և դատախազության հաստիքները համալրվել են: Մշակվել և իրավակիրառ մարմիններին են տրամադրվել նոր Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերի ուղեցույցները: Նոր օրենսգրքերի կիրառման ընթացքում ծագած խնդիրների բացահայտման նպատակով իրականացվել է շարունակական մոնիթորինգ, որի արդյունքում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ և մշակվել օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

Միաժամանակ, որոշ միջոցառումների իրականացումը չի ապահովել նախատեսված բոլոր արդյունքների լիարժեք հաստատումը: Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների աշխատակիցների վերապատրաստումների քանակական ցուցանիշները հիմնականում ապահովվել են, սակայն ամբողջական տեղեկատվություն չի տրամադրվել այն մասին, թե վերապատրաստված բոլոր ծառայողներն արդյոք անցել են նաև նախատեսված բարեվարքության ուսումնասիրությունը:

Էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանն ուղղված՝ Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող իրա-

վական ակտի նախագիծը չի մշակվել՝ միասնական դատական կառավարման UNICOURT համակարգի ներդրման հետ կապված:

Դատախազների և քննիչների բարեվարքության պարբերական գնահատման կառուցակարգերը նախատեսվել են 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված օրենսդրական փոփոխություններով: Մասնավորապես, համապատասխան փոփոխություններ են կատարվել «Դատախազության մասին», «Քննչական կոմիտեի մասին» և «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքներում: Այդպիսով, բարեվարքության ուսումնասիրությունների իրականացման իրավական հիմքերն ամրագրվել են, սակայն ներկայացված տեղեկությունները չեն տալիս այդ կառուցակարգերի գործնական կիրառման և արդյունքների ամբողջական գնահատման հնարավորություն:

ՆՊԱՏԱԿ 6. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումներ

Քաղաքացիական դատավարության և պարտավորությունների ապահովման կարգավորումներ

Ռազմավարությամբ նախատեսված նպատակ 6-ը ներառում է վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտի վերանայում, պարտավորությունների կատարման ապահովման իրավակարգավորումների ուսումնասիրություն, կորպորատիվ իրավունքի արդիականացում, քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման խնդիրների գույքագրում, համապատասխան փոփոխությունների մշակում և էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրում:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտի վերանայման ուղղությամբ օրենսդրական փոփոխություններն ընդունվել են 2024 թվականի փետրվարի 7-ին, թեև գործողության համար նախատեսված ժամկետը 2023 թվականն էր: Գործողությունը գնահատվել է կատարված, քանի որ նախատեսված իրավական արդյունքը ձեռք է բերվել:

Ինչ վերաբերում է պարտավորությունների կատարման ապահովման իրավական կարգավորումներին, ապա ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ մշակվել են Քաղաքացիական օրենսգրքում և շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին օրենսդրական կարգավորումներում փոփոխությունների նախագծեր, որոնք ներկայացվել են վարչապետի աշխատակազմ: Սակայն հետագա ընթացքի և կառավարության որոշման վերաբերյալ բավարար տվյալներ չեն ներկայացվել: Բացակայում է

նաև տեղեկությունը՝ արդյոք շարժական գույքի գրավադրման դեպքերի առնվազն 70 տոկոսը համապատասխանում է հատուկ իրավակարգավորումներին: Այդ պատճառով գործողությունը գնահատվել է մասնակի կատարված:

Կորպորատիվ իրավունքի արդիականացման ուղղությամբ մշակվել է կորպորատիվ օրենսդրության բարեփոխումների հայեցակարգի նախնական տարբերակ և 2025 թվականի հունիսի 30-ին ներկայացվել վարչապետի աշխատակազմ: Սակայն կառավարության համապատասխան որոշումը դեռևս ընդունված չէր: Այս օրինակը ցույց է տալիս նախագծային աշխատանքի և վերջնական իրավական արդյունքի տարբերությունը:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման խնդիրների գույքագրման գործողությունը գնահատվել է կատարված: Հաշվետվությամբ նշվել է, որ 2018 թվականի օրենսգրքի կիրառման ընթացքում հայտնաբերված խնդիրների շուրջ 60 տոկոսը վեր են հանվել և ներառվել համապատասխան զեկույցում: Այդ գույքագրման հիման վրա մշակված փոփոխությունների նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման և շահագրգիռ մարմիններին, ստացել կառավարության հավանությունը և 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ:

Էլեկտրոնային արդարադատություն և գնահատման սահմանափակումներ

Մշտադիտարկումը վեր է հանել, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանն ուղղված փոփոխությունների նախագիծը մշակվել, ներկայացվել է վարչապետի աշխատակազմ, սակայն վերադարձվել է լրամշակման, ապա ստացել կառավարության հավանությունը և ընդունվել Ազգային ժողովի կողմից: Ընթացակարգային մակարդակում գործողությունը գնահատվել է կատարված:

Միաժամանակ, ուսումնասիրությունն արձանագրում է, որ էլեկտրոնային գործիքների ներդրման և գործարկման ընթացքում առաջացել են գործնական դժվարություններ: Համակարգի գործարկումից առաջ շահագրգիռ անձանց նախնական տեղեկացման և փորձարկման բավարար պայմաններ չեն ապահովվել: Հետևաբար, իրավական հիմքի ընդունումը չի ապացուցում համակարգի լիարժեք կիրառելիությունը, արդյունավետությունը կամ օգտատերերի բավարարվածությունը:

Սույն նպատակի ներքո հիմնական առաջընթացն արձանագրվել է քաղաքացիական դատավարության օրենսդրական փոփոխությունների, խնդիրների

գույքագրման և էլեկտրոնային արդարադատության իրավական հիմքերի ձևավորման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, պարտավորությունների ապահովման և կորպորատիվ իրավունքի որոշ բաղադրիչների հեփագա ընթացքը հաստատված չէ:

ՆՊԱՏԱԿ 7. Վարչական և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումներ

Ոլորտային խնդիրների գույքագրում և փոփոխությունների փաթեթի պատրաստում: Նպատակ 7-ի շրջանակում նախատեսված էր գույքագրել Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման խնդիրներն ու բացերը, մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, ներդնել էլեկտրոնային արդարադատությանը համապատասխան կարգավորումներ և կատարելագործել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը:

Վարչական դատավարության օրենսգրքի կիրառման խնդիրների գույքագրումը գնահատվել է կատարված: Հասանելի տվյալներով՝ դատարաններից և վարչարարություն իրականացնող մարմիններից հավաքագրվել են առաջարկներ, դրանք ամփոփվել են զեկույցում, որը հասանելի է եղել Արդարադատության նախարարությունում և վարչապետի աշխատակազմում:

Գույքագրված խնդիրների հիման վրա Վարչական դատավարության օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխությունների նախագծեր են մշակվել և ներկայացվել հանրային քննարկման ու շահագրգիռ մարմիններին: Սակայն մշտադիտարկումը չի հաստատել գործողության ամբողջական կատարումը: Որպես իրականացված արդյունք վկայակոչվել է Քրեակատարողական օրենսգրքի դրույթ, որն ընդունվել և ուժի մեջ էր մտել մինչև 2022–2026 թվականների ռազմավարության հաստատումը: Հետևաբար, այդ դրույթը չի կարող ինքնին դիտարկվել որպես ռազմավարության շրջանակում իրականացված նոր արդյունք:

Բացի այդ, գործողության ինը արդյունքային ցուցանիշներից մի քանիսի մասով հաշվետվությունը հղում է կատարել նախագծերի մշակմանը և ներկայացմանը, սակայն նախագծերում անհրաժեշտ կարգավորումները դեռ ներառված չեն եղել կամ դրանց ընդունումը չի հաստատվել: Ուստի գործողությունը գնահատվել է մասնակի կատարված:

Էլեկտրոնային դատավարություն և վարչական իրավախախտումների օրենսդրություն

Ռազմավարական նպատակի ներքո նախատեսված գործողությունների մշտադիտարկումը ցույց է տալիս, որ Էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրմանն ուղղված փոփոխություններն ընդունվել են՝ ձևավորելով անհրաժեշտ իրավական հիմքը: Սակայն գործնական կիրառումը կախված է եղել օրենքի ուժի մեջ մտնելուց և համակարգի փաստացի գործարկումից:

Վարչական իրավախախտումների նոր օրենսգրքի և հարակից օրենքների նախագծերը մշակվել, հանրային քննարկման ներկայացվել և լրամշակվել են: Այնուամենայնիվ, մշտադիտարկման ընթացքում նոր օրենսգիրք դեռևս չի ընդունվել, իսկ նախագծի հետագա ընթացքի մասին բավարար տեղեկություն հասանելի չի եղել: Ֆոկուս-խմբային քննարկման ընթացքում ստացված տեղեկություններով՝ փաթեթը շարունակում էր քննարկվել շահագրգիռ կողմերի հետ: Ինչով պայմանավորված գործողությունը գնահատվել է մասնակի կատարված:

Այսպիսով, ընթացակարգային գնահատման համաձայն՝ չորս գործողություններից երկուսը կատարված են, երկուսը՝ մասնակի, իսկ չկատարված գործողություններ չեն արձանագրվել: Սակայն քանակական պատկերը չի նշանակում, որ նախատեսված բոլոր արդյունքներն ապահովված են:

ՆՊԱՏԱԿ 8. Մնանկության ոլորտի բարեփոխումներ

Նպատակ 8-ի շրջանակում նախատեսվել էր բարեփոխել սնանկության ոլորտի իրավական կարգավորումները՝ բացահայտված խնդիրների և արդիական կարիքների համապարփակ լուծման, սնանկության վարույթների արդյունավետության բարձրացման և էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման միջոցով: Մասնավորապես, նախատեսվում էր մշակել ոլորտի բարեփոխումների հայեցակարգ, դրա հիման վրա ընդունել միասնական օրենսդրական ակտ, կրճատել սնանկության գործերի քննության ժամկետները և ավելացնել ֆինանսական առողջացումների դեպքերը:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ սնանկության ոլորտի բարեփոխումների շրջանակում մշակվել է ոլորտի խնդիրների և արդիական կարիքների համապարփակ լուծմանն ուղղված հայեցակարգ, որի հիման վրա մշակվել և շահագրգիռ մարմինների հետ քննարկվել են Սնանկության օրենսգրքի և հարակից օրենքների նախագծերը: Օրենսդրական փաթեթը 2025 թվականի հունիսի 30-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, իսկ նոր Սնանկության օրենսգիրքն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2026 թվականի հունիսի 18-ին: Օրենսգիրքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակումից

մեկ տարի անց, ինչից հետո ուժը կորցրած է ճանաչվելու «Սնանկության մասին» 2006 թվականի օրենքը:

Նոր օրենսգրքով նախատեսվել են իրավակիրառ պրակտիկայում բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված կարգավորումներ, ինչպես նաև առանձին սուբյեկտների և անդրսահմանային սնանկության վերաբերյալ հատուկ ընթացակարգեր: Այսպիսով, օրենսդրական մակարդակում ձևավորվել են ոլորտի համապարփակ կարգավորման և առանձնահատուկ ընթացակարգերի կիրառման իրավական հիմքերը: Միաժամանակ, անհրաժեշտ է տարբերակել օրենսդրական կարգավորումների նախատեսումը դրանց գործնական կիրառումից. առկա տվյալները դեռևս հնարավորություն չեն տալիս հաստատելու, թե որքանով են այդ կարգավորումները լուծելու բացահայտված խնդիրները:

Սնանկության գործերի քննության ժամկետների առնվազն 20 տոկոսով կրճատումը և ֆինանսական առողջացումների դեպքերի շուրջ 10 տոկոսով ավելացումը նախատեսված էին որպես նոր օրենսգրքի կիրարկումից հետո երկու տարվա ընթացքում ակնկալվող արդյունքներ: Միաժամանակ, գործողության վերջնաժամկետը Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի N 1974-Լ որոշմամբ 2024 թվականի երկրորդ կիսամյակից տեղափոխվել է 2025 թվականի առաջին կիսամյակ, իսկ նոր Սնանկության օրենսգիրքն ընդունվել է միայն 2026 թվականի հունիսի 18-ին և ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակումից մեկ տարի անց: Արդյունքում՝ օրենսգրքի կիրարկումից հետո նախատեսված արդյունքների գնահատման համար անհրաժեշտ երկամյա ժամանակահատվածը չի համընկնում Ռազմավարության իրականացման և դրա կատարողականի ամփոփ գնահատման ժամանակահատվածի հետ: Հետևաբար, մշտադիտարկման պահին հնարավոր չէր օբյեկտիվորեն գնահատել այդ ցուցանիշների ապահովվածությունը: Սա սահմանափակում է ոչ միայն ակնկալվող գործնական արդյունքների գնահատումը, այլև Ռազմավարության ավարտին դրանց կատարման վերաբերյալ ամբողջական եզրակացություն անելու հնարավորությունը:

Սնանկության վարույթում էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման ուղղությամբ ևս օրենսդրական փոփոխություններ են կատարվել: Մասնավորապես, 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված ՀՕ-27-Ն օրենքով նախատեսվել են դատավարական և սնանկության վարույթին առնչվող գործողությունների էլեկտրոնային եղանակով իրականացման առանձնահատկություններ:

Այսպիսով, սնանկության ոլորտում ձևավորվել են համապարփակ օրենսդրական կարգավորումների և էլեկտրոնային արդարադատության գործիքների կի-

րառման իրավական հիմքերը: Միաժամանակ, նոր Սնանկության օրենսգիրքը դեռևս ուժի մեջ չի մտել, իսկ դրա կիրարկումից հետո ակնկալվող արդյունքների գնահատման ժամանակահատվածը դուրս է գալիս Ռազմավարության իրականացման (գործողության) ժամկետներից: Հետևաբար, ոլորտում իրականացված բարեփոխումների գործնական արդյունավետությունը և դրանց ազդեցությունը սնանկության վարույթների տևողության ու ֆինանսական առողջացումների վրա դեռևս գնահատման ենթակա են:

ՆՊԱՏԱԿ 9. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում

Արբիտրաժային կենտրոնի ստեղծում: Նպատակ 9-ի հիմնական ուղղություններից է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծումը՝ տեսլականի, կառավարման և ֆինանսավորման մոդելի մշակմամբ, միջազգային և տեղական գործընկերների ներգրավմամբ, իրավական հիմքերի և նյութատեխնիկական պայմանների ապահովմամբ: Մշտադիտարկման արդյունքները այս ուղղությամբ արձանագրում են զգալի ընթացակարգային առաջընթաց:

Մասնավորապես, Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից ձևավորվել է միջազգային և ազգային 27 մասնագետներից կազմված խորհրդատվական հանձնաժողով: Կապեր են հաստատվել հայաստանյան 14 մարմինների և միությունների, ինչպես նաև յոթ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ: Միջազգային համագործակցության շրջանակում կապեր են հաստատվել միջազգային արբիտրաժային հաստատությունների հետ:

Կարիքների գնահատման հարցումն իրականացվել է ավելի քան 200 կազմակերպությունների շրջանում, որոնցից մասնակցել է 88-ը: Մշակվել է կենտրոնի տեսլականը, կանոնադրության նախագիծը, արբիտրաժային և արագացված արբիտրաժային կանոնները, հաշտարարության կանոնները, արբիտրաժային խորհրդի գործունեության կարգը, արբիտրների վարքագծի կանոնները և վճարների կարգավորումները: Կենտրոնի կանոնադրությունը գրանցվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրում:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամը գրանցվել է 2023 թվականի մայիսի 19-ին: Կենտրոնի համար վարձակալվել է տարածք, հատկացվել է ֆինանսավորում ԵՄ բյուջետային աջակցության միջոցներից, և մշակվել է կենտրոնի կայքը: Այս տվյալները հաստատում են իրավական ու կազմակերպական հիմքերի ստեղծումը:

Արբիտրաժի և հաշտարարության օրենսդրական գործիքներ

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններն ընդունվել են 2023 թվականի մայիսի 3-ին: Դրանցով հստակեցվել են արբիտրին բացարկ հայտնելու հիմքերը և շահերի բախման կարգավորումները: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններով կրճատվել են արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման և հարկադիր կատարման վարույթների որոշ ժամկետներ, այդ թվում՝ կատարողական թերթ տալու դիմումի քննության ժամկետը մեկ ամսից մինչև 15 օր:

Հաշտարարության ոլորտում ընդունվել են օրենսդրական փոփոխություններ, մշակվել և գործարկվել է e-mediation.am հարթակը: Այն նախատեսված է հաշտարարների ռեեստրի վարման, ընտրության և նշանակման գործընթացների ավտոմատացման ու առցանց հաշտարարության համար: Ընդունվել են հաշտարարների որակավորումը, ուսուցումն ու վերապատրաստումը, ռեեստրի վարումը և էլեկտրոնային նշանակումը կարգավորող ենթաօրենսդրական ակտեր:

2025 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել ընտանեկան մի շարք վեճերով դատարան դիմելուց առաջ պարտադիր հաշտարարության կարգավորումները: Հասանելի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էլեկտրոնային հարթակ է մուտքագրվել շուրջ 2,010 գործ, որոնցից 1,742-ն ավարտվել է, այդ թվում՝ 518-ը հաշտությամբ: Հաշտարարների թիվը ռազմավարության սկզբնական փուլում գնահատվել է մոտ 5–10, 2024 թվականի վերջում հասել է 79-ի, իսկ 2025 թվականին՝ 125-ի:

Ընթացակարգային գնահատմամբ նպատակի ներքո նախատեսված բոլոր ինը գործողությունները համարվում են կատարված: Սա ընտրված նպատակների շարքում գործնական առաջընթացի առավել հստակ օրինակներից է:

ՆՊԱՏԱԿ 10. Իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներ

Փաստաբանների պալատի կարգավորումներ և անվճար օգնության շրջանակ

Նպատակ 10-ը ներառում է Փաստաբանների պալատի կառավարման և հաշվետվողականության բարելավում, անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի վերանայում, հանրային պաշտպանների թվի ավելացում, pro bono ծառայությունների կառուցակարգերի ներդրում և խրախուսում, փաստաբանների որակավորման ընթացակարգերի փոփոխություն, կարգապահական որոշումների դատական բողոքարկում և pro bono էլեկտրոնային հարթակի ստեղծում:

2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Փաստաբանության մասին» օրենքի փոփոխություններով նախատեսվել են Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի ձևավորման, մարմինների գործունեության, անհամատեղելիության, ընտրության և լիազորությունների դադարման վերաբերյալ կարգավորումներ: Կարգապահական հանձնաժողովի կազմը հաստատվել է 2022 թվականի դեկտեմբերին, իսկ Պալատի խորհրդի գործունեության կարգը՝ 2023 թվականի հունվարին:

Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով օտարերկրացիներին՝ արտաքսման որոշումը բողոքարկելու նպատակով, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու և այդ կարգավիճակը վերանայելու վարույթների մասնակից անձանց, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայող տուժողներին: Այս փոփոխությունները գործող են և գնահատվել են կատարված:

Հանրային պաշտպանների թվի ավելացման համար որոշ ժամանակահատվածում ավելացվել է 15 հաստիք, սակայն 2025 թվականին բյուջետային միջոցների կրճատման հետևանքով հաստիքները նվազել են 11-ով: Արդյունքում զուտ աճը կազմել է չորս հաստիք: ՀՀ ԱՆ կողմից գործողությունը գնահատվել է կատարված՝ հաշվի առնելով նախատեսված ժամանակահատվածում հաստիքների ավելացման փաստը: Մշտադիտարկումը ցույց է տալիս սակայն, որ հաստիքների առնչությամբ ձեռք բերված աճի կայունությունը երաշխավորված չէ:

Pro bono իրավաբանական օգնության օրենսդրական հիմքերը ստեղծվել են, սակայն ՀՀ ԱՆ կողմից հրապարակված հաշվետվություններում չկան բավարար տվյալներ այն մասին, թե քանի քաղաքացի է օգտվել ծառայությունից և արդյոք այն նվազեցրել է հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը նախատեսված 30 տոկոսով: Այսպիսով, իրավական կարգավորումը հաստատված է, իսկ իրական կիրառման և ազդեցության գնահատումը՝ ոչ:

Հարկային փոփոխություններ և չկատարված գործողություններ

Ուսումնասիրության շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվել 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային փոփոխություններին, որոնց արդյունքում փաստաբանական ծառայությունները տեղափոխվել են հարկման ընդհանուր համակարգ: Մասնագիտական համայնքի, Փաստաբանների պալատի, Մարդու իրավունքների պաշտպանի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից բարձրացվել են ծառայությունների թանկացման, անհատ փաստաբանների գործունեության դժվարացման, pro bono ծառայությունների նվազման և հանրային պաշտպանի գրասենյակի

ծանրաբեռնվածության աճի ռիսկեր: Մշտադիտարկումը ըստ այդմ ցույց է տալիս, որ փոփոխություններին չի նախորդել մարդու իրավունքների և արդարադատության մատչելիության վրա ազդեցության համապարփակ գնահատում:

2025 թվականի մարտի 26-ին սահմանվել է սահմանափակ հարկային բացառություն, համաձայն որի անվճար իրավաբանական ծառայությունները չեն հարկվում ԱԱՀ-ով, եթե դրանց արժեքը ամսական չի գերազանցում տվյալ փաստաբանի կամ կազմակերպության հարկվող գործարքների արժեքի 5 տոկոսը: ՊԵԿ տվյալների համաձայն՝ 2025 թվականին արտոնությունից օգտվել է ԱԱՀ վճարող սուբյեկտների միայն 0.46 տոկոսը, իսկ մարզերում ցուցանիշը զրոյական է եղել: Ըստ զեկույցի՝ արտոնությունը լայն կիրառություն չի ստացել և չի լուծել pro bono ծառայությունների արդյունավետ խրախուսման խնդիրը:

Փաստաբանների որակավորման ընթացակարգերի վերանայման փոփոխություններն ընդունվել են 2022 թվականին՝ որոշակի մասնագիտական պահանջներին ու ստաժին համապատասխանող անձանց հնարավորություն տալով մասնակցել քննությանը՝ առանց Փաստաբանական դպրոցում պարտադիր ուսուցման: Սակայն փաստաբանների պալատի կարգապահական որոշումների դատական բողոքարկման հատուկ ընթացակարգի նախագիծը միայն 2025 թվականի դեկտեմբերի 30-ին ներկայացվել է վարչապետի աշխատակազմ, իսկ դրա հետագա ընթացքը չի հաստատվել: Pro bono խրախուսման նոր միջոցների և էլեկտրոնային հարթակի ստեղծման գործողությունը ևս գնահատվել է չկատարված:

Մշտադիտարկման արդյունքներով՝ յոթ գործողություններից հինգը գնահատվել են կատարված, երկուսը՝ չկատարված: Հիմնական չլուծված հարցերն են անվճար իրավաբանական օգնության իրական մատչելիությունը, pro bono ծառայությունների կայունությունը, հանրային պաշտպանների ռեսուրսների երկարաժամկետ ապահովումը և կարգապահական որոշումների դատական բողոքարկման գործուն մեխանիզմի բացակայությունը: Այս ոլորտում հատկապես կարևոր է գործողությունների միջև կապի գնահատումը. հարկային քաղաքականությունը կարող է ուղղակիորեն խաթարել pro bono օգնության խրախուսման նպատակով նախատեսված գործիքների արդյունավետությունը:

ՆՊԱՏԱԿ 11. Հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ

Նպատակ 11-ի շրջանակում նախատեսվել էր բարեփոխել հարկադիր կատարման համակարգի իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը, ներդնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (ՀԿԱԾ) նոր մոդել, բարելավել ծառայության մարդկային ռեսուրսներն ու տեխնիկական հագեցվածությունը,

ինչպես նաև կրճատել կատարողական վարույթների և առանձին կատարողական գործողությունների տևողությունը՝ հնարավորինս ընդլայնելով դրանց ինքնաշխատ իրականացումը:

Այս ուղղությամբ մշակվել է ՀԿԱԾ-ի նոր մոդելի ներդրման հայեցակարգ, ընդունվել է «Կատարողական վարույթի մասին» օրենքը, իսկ «ՀԿԱԾ-ի մասին» օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Արդիականացվել է ծառայության տեխնիկական հագեցվածությունը, ներդրվել են կատարողական վարույթներով վճարումների մշակման, գանձված գումարների բաշխման, արգելանքների վերացման և վարույթների կարճման ավտոմատացված գործիքներ: Իրականացվել են նաև անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ:

Միաժամանակ, նախատեսված արդյունքների ապահովումը բոլոր ուղղություններով հաստատված չէ: Մասնավորապես, ՀԿԱԾ-ում միջին աշխատավարձի աճը կազմել է 41.5 տոկոս՝ նախատեսված առնվազն 50 տոկոսի փոխարեն: Բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թվի աճի ցուցանիշի գնահատման համար բավարար տվյալներ չեն ներկայացվել: Վերապատրաստված աշխատակիցների տեսակարար կշռի, դասընթացների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության գնահատման համար ևս անհրաժեշտ տվյալները բավարար չեն եղել: Թեև կատարողական վարույթների ավտոմատացման ուղղությամբ իրականացվել են համակարգային փոփոխություններ, դրանց արդյունքում կատարողական գործողությունների միջին տևողության՝ առնվազն 40 տոկոսով կրճատումը համադրելի տվյալներով հաստատված չէ:

Այսպիսով, հարկադիր կատարման համակարգում իրականացվել են օրենսդրական, տեխնիկական և կազմակերպական փոփոխություններ, սակայն դրանց մի մասի գործնական ազդեցությունը և սահմանված արդյունքային ցուցանիշների ապահովումը դեռևս բավարար չափով գնահատելի չեն:

ՆՊԱՏԱԿ 12. Ռազմավարական այլ ուղղություններ

Նոտարական ոլորտի կարգավորումներ

Նպատակ 12-ը ներառում է կատարողական մակագրության ինստիտուտի կատարելագործում և ընդլայնում, նոտարների կարգապահական պատասխանատվության ընթացակարգերի վերանայում, նոտարների պատասխանատվության ապահովագրության համակարգի վերանայում, Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կարգավորող միասնական իրավական ակտի մշակում և փորձագիտական գործունեության մասին օրենքի նախագիծ:

Կատարողական մակագրության ինստիտուտի կատարելագործման և ընդլայնման գործողությունը գնահատվել է չկատարված: Մշտադիտարկումը ցույց է տվել, որ ռազմավարության մշակման փուլում բավարար նախնական վերլուծություն չի կատարվել՝ պարզելու գործող կարգավորման խնդիրը, դրա պատճառները և լուծումների արդյունավետությունը: Նոտարների հետ քննարկումները կազմակերպվել են ռազմավարության հաստատումից հետո: Հետագա ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խնդրի լուծման հիմնական նախադրյալը կարող էր լինել արդարադատության համակարգի թվայնացումը, այլ ոչ թե օրենսդրական փոփոխությունը:

Սույն գործողությունը և դրա առնչությամբ իրականացված ուսումնասիրությունը ցույց են տալիս ռազմավարական պլանավորման թերությունը. համաձայն որի, եթե խնդրի ախտորոշումն ու լուծումների համեմատական գնահատումը կատարվում են արդեն իրականացման փուլում, կարող է պարզվել, որ գործողության անհրաժեշտությունը կամ ընտրված գործիքը հիմնավորված չէ:

Նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերի վերանայման ուղղությամբ 2023 թվականի հուլիսի 12-ին ընդունվել են «Նոտարիատի մասին» օրենքի փոփոխությունները, իսկ սեպտեմբերի 22-ին՝ կարգապահական վարույթի արդյունքներով որոշումների օրինակելի ձևերի վերաբերյալ նախարարական հրամանը: Գործողությունը գնահատվել է կատարված: Նոտարների պատասխանատվության ապահովագրության համակարգի փոփոխություններով նոտարին հնարավորություն է տրվել պարտադիր ապահովագրությունից բացի լրացուցիչ ծածկույթ ձեռք բերել կոնկրետ գործարքի կամ գործարքների ռիսկերի համար: Այս գործողությունը ևս գնահատվել է կատարված:

Արդարադատության ակադեմիա և փորձագիտական գործունեություն

Արդարադատության ակադեմիայի գործունեությունը կանոնակարգող միասնական իրավական ակտի ուղղությամբ մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքի նախագիծ և հարակից իրավական ակտերի փաթեթ: Վերջիններս վերաբերում են ակադեմիայի կառավարմանը, ունկնդիրների կարգավիճակին, իրավունքներին ու պարտականություններին, կարգապահական վարույթներին, կառավարման մարմինների լիազորություններին և քննությունների կազմակերպման ու արդյունքների վիճարկման ընթացակարգերին:

Սակայն փաթեթը վերադարձվել է վարչապետի աշխատակազմի կողմից լրամշակման և դիտարկվող ժամանակահատվածում վերջնական իրավական ակտեր չեն ընդունվել: Ինչով պայմանավորված գործողությունը գնահատվել է չկատարված:

«Փորձագիտական գործունեության մասին» օրենքի նախագիծը նույնպես մշակվել և ներկայացվել է վարչապետի աշխատակազմ, բայց գործողության վեց արդյունքային ցուցանիշները կախված էին նախագծերի վերջնական ընդունումից: Քանի որ կառավարության հավանության որոշում և վերջնական ընդունում չի հաստատվել, գործողությունը գնահատվել է չկատարված: Նախապատրաստական աշխատանքները ցույց են տալիս առաջընթաց, սակայն չեն ապահովում նախատեսված վերջնարդյունքը:

Հինգ գործողություններից երկուսը գնահատվել են կատարված, երեքը՝ չկատարված: Կատարված են նոտարների կարգապահական պատասխանատվության և պատասխանատվության ապահովագրության համակարգի վերանայման գործողությունները: Չկատարված են կատարողական մակագրության ինստիտուտի ընդլայնումը, Արդարադատության ակադեմիայի միասնական իրավական կարգավորումը և փորձագիտական գործունեության մասին օրենքի նախագիծը:

Այս նպատակի հիմնական եզրահանգումն այն է, նախագծերի մշակումը չպետք է դիտարկվի որպես վերջնական կատարում, երբ ցուցանիշները պահանջում են կառավարության որոշում, օրենքի ընդունում կամ կարգավորման գործնական ներդրում:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2022–2026 թթ. առաջին կիսամյակի դրությամբ Ռազմավարությամբ նախատեսված 87 գործողություններից 56-ը գնահատվել են կատարված, 12-ը՝ մասնակի կատարված, իսկ 19-ը՝ չկատարված: Ընթացակարգային (քանակական) գնահատման արդյունքում կատարողական ցուցանիշը կազմել է 64.37 տոկոս:

Միաժամանակ, ազդեցության մակարդակի (որակական) գնահատման ենթարկված 16 գործողություններից 5-ը գնահատվել են իրականացված, 5-ը՝ իրականացված ոչ ամբողջական, իսկ 6-ը՝ չիրականացված: Այս գնահատման կատարողական ցուցանիշը կազմել է 31.25 տոկոս:

Արդյունքների համադրությունը ցույց է տալիս, որ գործողությունների ընթացակարգային կատարողականը զգալիորեն գերազանցում է դրանց՝ ռազմավարական նպատակներին և նախատեսված արդյունքներին նպաստելու մակարդակը: Այսինքն՝ գործողությունների իրականացումը ոչ բոլոր դեպքերում է հանգեցրել այն խնդիրների լուծմանը կամ այն արդյունքների ապահովմանը, որոնց համար դրանք նախատեսվել էին: Հետևաբար, Ռազմավարության իրականացման արդյունավետությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն նախատեսված միջոցառումների կատարման փաստը, այլև ընտրված գործողությունների գործնական արդյունքները և ազդեցությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԵՐ

Ա/ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Գործողության կատարողականի գնահատման առնչությամբ

- Առաջարկվում է վերանայել կատարողականի գնահատման մոտեցումը, որի պայմաններում իրավական ակտի նախագիծը մշակելը կամ Կառավարություն ներկայացնելը կարող է բավարար համարվել գործողությունը կատարված գնահատելու համար՝ անկախ դրա հետագա ընթացքից: Օրինակ, եթե ռազմավարական գործողության թիրախը իրավական ակտի ընդունումն է, ապա միայն նախագծի մշակումը կամ ներկայացումը պետք է դիտարկել որպես կատարման միջանկյալ փուլ, այլ ոչ թե վերջնական արդյունք:
- Եթե նախագիծը վերադարձվել է լրամշակման, չի ներկայացվել Ազգային ժողով կամ ներկայացվելուց հետո չի ընդունվել, գործողությունը պետք է գնահատվի ըստ փաստացի ձեռք բերված արդյունքի՝ հաշվի առնելով նաև ռազմավարությամբ սահմանված ժամկետը: Ընդ որում, առաջարկվում է տարբերակել պատասխանատու մարմնի վերահսկողության ներքո գտնվող գործողությունները և այլ մարմինների որոշումներից կախված հետագա փուլերը՝ չվերագրելով պատասխանատու մարմնին այլ մարմնի անգործությունը:

Գործողության ցուցիչների կատարողականի գնահատման առնչությամբ

- Առաջարկվում է յուրաքանչյուր գործողության գնահատման համար գնահատել նաև դրա ցուցիչների կատարողականը և սահմանել դրանց կատարման ապացույցները: Ընդհանուր կատարողականը պետք է հաշվարկվի բաղադրիչների կատարման աստիճանի հիման վրա՝ հաշվի առնելով դրանց հարաբերական նշանակությունը և գործողության վերջնական արդյունքի համար պարտադիր բնույթը:
- Նման մոտեցումը հնարավորություն կտա խուսափել այն իրավիճակներից, երբ որոշ աշխատանքների իրականացումը ստվերում է թողնում է մեկ այլ՝ էական կամ առանցքային ցուցիչի չկատարումը: Եթե որևէ ցուցիչի իրականացումը պայմանավորում է ամբողջ գործողության վերջնական արդյունքի ձեռքբերումը, դրա բացակայությունը պետք է արտացոլվի ընդհանուր գնահատականում:

Հաշվետվությունների պարբերական թարմացում և հրապարակայնություն

- Առաջարկվում է ապահովել դատահիրավական ոլորտի ռազմավարությունների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների՝ datairav.am հարթակում պարբերական թարմացումը՝ արտացոլելով ոչ միայն հաշվետվության կազմման պահին առկա տվյալները, այլև հետագա բոլոր էական փոփոխություններն ու զարգացումները: Մասնավորապես, անհրաժեշտ է լրացնել տեղեկատվությունը իրավական ակտերի նախագծերի հետագա ընթացքի, դրանց ընդունման կամ մերժման, պատասխանատու մարմինների կողմից կատարված լրացուցիչ քայլերի, ինչպես նաև նախապես արձանագրված թերությունների վերացման վերաբերյալ:
- Սա հնարավորություն կտա հանրությանը և շահագրգիռ կազմակերպություններին հետևել ռազմավարության իրականացման իրական ընթացքին, գնահատել արձանագրված արդյունքների կայունությունը և խուսափել այն իրավիճակներից, երբ հաշվետվությունում որպես կատարված ներկայացված գործողությունն իր վերջնական նպատակին հասնում է ավելի ուշ կամ ընդհանրապես չի հասնում, ինչպես նաև հակառակը, երբ «չկատարված» գնահատված գործողությունը հետագայում կատարվում է, սակայն արդյունքը հաշվետվությամբ չի ներկայացվում:

Ընդհանուր բնույթի առաջարկներ

- Առաջարկվում է սահմանել միասնական սանդղակ՝ հստակեցնելով նաև, թե ինչպես են գնահատվում բազմաբաղադրիչ գործողությունները, և ինչպես է կատարողականը կապվում վերջնական գնահատականի ու միավորի հետ:
- Ապահովել կատարողականի գնահատման ապացուցողական հիմքի բավարարությունը և թափանցիկությունը:
- Ռազմավարության կատարողականը գնահատել նաև արդյունքների և ազդեցության մակարդակում:
- Առաջարկվում է գործողությունների ընթացակարգային կատարողականի ամփոփումից բացի՝ ռազմավարական յուրաքանչյուր նպատակի համար գնահատել՝ արդյոք նախատեսված միջանկյալ արդյունքները ձեռք են բերվել, խնդիրները լուծվել են, և իրականացված միջոցառումները որքանով են նպաստել ռազմավարական նպատակին: Այդ նպատակով անհրաժեշտ է հնարավորության դեպքում կիրառել չափելի արդյունքային ցուցանիշներ, ելակետային տվյալներ և համեմատելի ժամանակային տվյալներ:
- Եթե ազդեցության գնահատումը հնարավոր չէ կատարել ընթացիկ փուլում, անհրաժեշտ է նշել դրա պատճառը և սահմանել, թե երբ ու ինչ տվյալների հիման վրա է այն իրականացվելու:

Բ/ ԱՌԱՆՁԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ՆՊԱՏԱԿ 1.

- Էլեկտրոնային դատավարության համակարգերի օգտագործելիության և գործնական արդյունավետության բարձրացում
  - Առաջարկվում է կատարելագործել էլեկտրոնային դատավարության համակարգերի ինտերֆեյսը, օգտագործման հարմարավետությունը և գործառնական հուսալիությունը՝ ապահովելով դատավարական գործընթացի բոլոր մասնակիցների համար համակարգի հասկանալի, հասանելի և արդյունավետ կիրառումը: Համակարգերի զարգացումը պետք է միտված լինի ոչ միայն դատավարական գործողությունների էլեկտրոնային կատարման հնարավորության ստեղծմանը, այլև դրանց անխափան իրականացմանը՝ փաստաթղթերի և ապացույցների ներկայացման, պահպանման, հասանելիության և գործի նյութերում պատշաճ արտացոլման ամբողջ շղթայում:
- Դատական վարույթների և հարակից գործընթացների ամբողջական թվայնացում
  - Առաջարկվում է ապահովել դատական վարույթների՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող առանձին գործողություններից դեպի ամբողջական թվային գործընթացի անցումը՝ ներառելով վարույթի բոլոր էական փուլերը, դրանցում ներգրավված անձանց պատշաճ էլեկտրոնային ծանուցումը և անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն դեպքերին, երբ էլեկտրոնային համակարգի կիրառումը դեռևս չի վերացնում նույն գործողությունների զուգահեռ՝ թղթային կամ այլ ոչ էլեկտրոնային եղանակով կատարման անհրաժեշտությունը: Նպատակը պետք է լինի ոչ միայն առանձին գործառույթների թվայնացումը, այլև գործընթացների շարունակականության, թափանցիկության և հետագծելիության ապահովումը:
- Դատական վիճակագրության հասանելիության և թվայնացման արդյունքների չափելիության ապահովում

- Առաջարկվում է ապահովել դատական գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալների կանոնավոր, հանրամատչելի և համադրելի հրապարակումը՝ հնարավորություն տալով գնահատելու ոչ միայն էլեկտրոնային համակարգերի ներդրումը, այլև դրանց փաստացի կիրառման ծավալը և ազդեցությունը դատական գործընթացների արդյունավետության վրա: Այդ նպատակով անհրաժեշտ է հրապարակվող տվյալների համակարգում արտացոլել էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարական գործողությունների, համակարգերից օգտվելու և համապատասխան գործընթացների արդյունքների վերաբերյալ չափելի ցուցանիշներ: Գնահատման հիմքում պետք է լինեն ստուգելի տվյալներ, որոնք հնարավորություն կտան համեմատելու սահմանված նպատակային ցուցանիշները փաստացի արդյունքների հետ:

ՆՊԱՏԱԿ 2.

- Ապահովել Փաստահավաք հանձնաժողովի ինստիտուցիոնալ անկախության և ինքնուրույնության բավարար երաշխիքներ
    - Առաջարկվում է վերանայել հանձնաժողովի իրավական և ինստիտուցիոնալ մոդելը՝ գնահատելով դրա՝ Հանրային խորհրդի կազմում գործելու, ինչպես նաև հանձնաժողովի ձևավորման, հաշվետվողականության և կազմակերպական ապահովման գործընթացներում Հանրային խորհրդի ներգրավվածության ազդեցությունը հանձնաժողովի անկախության վրա: Անհրաժեշտ է հստակ սահմանել հանձնաժողովի գործառութային ինքնուրույնության, վարչական կազմակերպման և ֆինանսավորման երաշխիքները՝ ապահովելով, որ այն կարողանա իր մանդատն իրականացնել անկախ՝ ներառյալ պետական մարմինների և համակարգային խախտումների ուսումնասիրության դեպքերը:
- Վերանայել հանձնաժողովի անդամների ընտրության և բարեվարքության գնահատման մեխանիզմները
    - Առաջարկվում է սահմանել հանձնաժողովի մանդատին համապատասխան մասնագիտական կարողությունների գնահատման հստակ չափանիշներ և ապահովել դրանց կիրառումը անդամների ընտրության ընթացքում: Գնահատումը պետք է հնարավորություն տա պարզելու թեկնածուների փաստահավաք գործունեության, մարդու իրավունքնե-

րի պաշտպանության, իրավագիտության, պատմության կամ հարակից ոլորտների համապատասխան գիտելիքներն ու փորձառությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է նախատեսել թեկնածուների բարեվարքության և հնարավոր շահերի բախման նախնական, օբյեկտիվ գնահատման գործուն մեխանիզմներ՝ ապահովելով ընտրության գործընթացի թափանցիկությունն ու հանրային վստահությունը:

- Ապահովել հանձնաժողովի մանդատի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու տեղեկատվության անմիջական հասանելիությունը
  - Առաջարկվում է սահմանել հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական, վարչական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների ապահովման հստակ մեխանիզմներ: Դրանք պետք է ներառեն մասնագետների և փորձագետների ներգրավման, փաստաթղթերի ու արխիվային նյութերի ուսումնասիրման, տվյալների կառավարման և պահպանման, լսումների կազմակերպման, ինչպես նաև տուժողների և վկաների հետ աշխատանքի համար անհրաժեշտ կարողությունները: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել հանձնաժողովի՝ իր մանդատի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի անմիջական հասանելիության լիազորությունները:
- Սահմանել հանձնաժողովի գործունեության արտաքին վերահսկողության և հաշվետվողականության գործուն մեխանիզմներ
  - Առաջարկվում է հստակեցնել հանձնաժողովի գործունեության օրինականության, անկախության և արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ նախատեսելով դրա և Հանրային խորհրդի շրջանակներից տարանջատված անկախ գնահատման հնարավորություն: Անհրաժեշտ է նաև ապահովել հանձնաժողովի գործունեության, արձանագրված արդյունքների, հանդիպած խոչընդոտների և ներկայացված առաջարկությունների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվողականություն՝ պահպանելով փաստահավաք գործընթացի մասնակիցների իրավունքներն ու պաշտպանվող տեղեկությունների գաղտնիությունը:

ՆՊԱՏԱԿ 4.

- Վերապատրաստումների արդյունավետությունը գնահատել ոչ միայն մասնակցության, այլև մասնագիտական արդյունքների հիման վրա
  - Առաջարկվում է դատավորների վերապատրաստումների վերաբերյալ հաշվետվություններում, մասնակցության քանակական տվյալներից բացի, ներկայացնել նաև վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության գնահատման արդյունքները: Անհրաժեշտության դեպքում այդ գնահատումը կարող է ներառել նաև վերապատրաստումների ընթացքում ձեռք բերված գիտելիքների և կարողությունների կիրառելիության վերաբերյալ հետագա գնահատում:
  - Դատական իշխանության անկախությանն առնչվող միջոցառումների գնահատումը դարձնել ավելի խորքային՝ կենտրոնանալով ոչ միայն օրենսդրական փոփոխությունների, այլև դրանց գործնական կիրառման վրա:
  - Ապահովել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման մեխանիզմի լիարժեք գործարկումը և դրա արդյունավետ կիրառությունը պրակտիկայում:

ՆՊԱՏԱԿ 5.

- Հստակեցնել UNICOURT համակարգի ներդրմամբ քրեական վարույթներում էլեկտրոնային գործիքների նախատեսված արդյունքներին հասնելու ընթացքը:
  - Ներկայացնել, թե միասնական դատական կառավարման համակարգի ներդրման շրջանակում ինչպես են ապահովվելու Նպատակով նախատեսված էլեկտրոնային գործիքները, ինչ գործառույթներ են նախատեսվում և ինչ ժամկետներում: Սա անհրաժեշտ է՝ գնահատելու համար, թե արդյոք նոր համակարգի ներդրումը կլուծի չկատարված գործողության հիմքում ընկած խնդիրները:

ՆՊԱՏԱԿ 6.

- Քաղաքացիական արդարադատության բարեփոխումների գնահատումը կապել դատական պաշտպանության մատչելիության և արդյունավետության հետ:

ՆՊԱՏԱԿ 7.

- Առանձին գնահատել վարչական արդարադատության արդյունավետությունը՝ քաղաքացու և պետական մարմնի միջև հարաբերություններում իրավական պաշտպանության տեսանկյունից:

  Մասնավորապես՝

  - ուսումնասիրել վարչական մարմինների որոշումների վիճարկման և դատական վերահսկողության արդյունավետությունը,
  - գնահատել վարչական գործերի քննության տևողությունը, դատարան դիմելու ընթացակարգային խոչընդոտները և դատական ակտերի կատարման խնդիրները,
  - վարչական իրավախախտումների նոր օրենսդրության գնահատման մեջ ներառել իրավախախտումների հստակության, պատասխանատվության համաչափության և պաշտպանության իրավունքի երաշխիքների ուսումնասիրությունը,
  - պարզել՝ էլեկտրոնային գործիքների ներդրումն իրականում նվազեցնում է վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը, թե պարզապես տեղափոխում է առկա խնդիրները թվային միջավայր:

ՆՊԱՏԱԿ 8.

- Սահմանել նոր Սնանկության օրենսգրքի կիրարկման արդյունքների պարբերական գնահատման և հրապարակման մեխանիզմ:

  - Օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո գնահատել սնանկության գործերի քննության ժամկետների փոփոխությունը, ֆինանսական առողջացումների դեպքերի թիվը և նախատեսված հատուկ ընթացակարգերի փաստացի կիրառումը՝ հրապարակելով համապատասխան ցուցանիշների վերաբերյալ համադրելի տվյալներ: Սա հնարավորություն կտա գնահատելու ոչ միայն օրենսդրական փոփոխությունների ընդունումը, այլև դրանց գործնական ազդեցությունը:

- Ապահովել Ռազմավարության ավարտից հետո նոր օրենսգրքի արդյունքների գնահատման շարունակականությունը:

  - Հաշվի առնելով գործողության վերջնաժամկետի հետաձգումը և օրենսգրքի կիրարկումից հետո նախատեսված երկամյա գնահատման ժամանակահատվածի՝ Ռազմավարության ավարտի հետ չհամընկնելը՝ անհրաժեշտ է նախատեսել արդյունքների հետագա գնահատման հստակ

ժամանակացույց և պատասխանատու մարմիններ: Գնահատումը պետք է ներառի Ռազմավարությամբ սահմանված ցուցանիշների՝ սնանկության գործերի քննության ժամկետների կրճատման, ֆինանսական առողջացումների դեպքերի ավելացման և հատուկ ընթացակարգերի փաստացի կիրառման վերաբերյալ տվյալները:

ՆՊԱՏԱԿ 9.

- Այլընտրանքային վեճերի լուծման համակարգի զարգացումը գնահատել ոչ միայն ստեղծված կառույցների, ընդունված կարգավորումների, որակավորված հաշտարարների կամ հարթակում գրանցված գործերի թվով, այլև դրանց գործնական արդյունավետությամբ:

  Անհրաժեշտ է ուսումնասիրել՝

  - հաշտարարության և արբիտրաժի կիրառման հաճախականությունը՝ ըստ վեճերի տեսակների,
  - հաշտարարությամբ ավարտված գործերի շրջանակում համաձայնության ձեռքբերման ցուցանիշը,
  - ձեռք բերված համաձայնությունների կամ արբիտրաժային որոշումների կամավոր և հարկադիր կատարման արդյունավետությունը,
  - ծառայությունների տարածքային և ֆինանսական մատչելիությունը,
  - քաղաքացիների և փաստաբանների իրազեկվածությունը, ինչպես նաև վստահությունը տվյալ մեխանիզմների նկատմամբ:
  - Իրավաբանական օգնության բարեփոխումների գնահատման հիմքում դնել ոչ թե միայն ծառայություն մատուցող անձանց կամ անվճար օգնության շահառուների շրջանակի ընդլայնումը, այլև օգնության իրական հասանելիությունն ու որակը:

ՆՊԱՏԱԿ 10.

Առաջարկվում է ուսումնասիրել՝

- անվճար իրավաբանական օգնության պահանջարկի և առկա ռեսուրսների հարաբերակցությունը,
- հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը, գործերի բաշխման սկզբունքները և ծառայությունների որակը,
- մարզերում իրավաբանական օգնության հասանելիությունը,

- խոցելի խմբերի՝ ներառյալ տեղահանված անձանց և ֆինանսական դժվարություններ ունեցող անձանց կարիքների բավարարումը,
- հարկային փոփոխությունների ազդեցությունը փաստաբանական ծառայությունների արժեքի և իրավաբանական օգնության մատչելիության վրա,
- իրավաբանական օգնության արդյունավետության գնահատման և շահառուների հետադարձ կապի մեխանիզմների առկայությունը:

ՆՊԱՏԱԿ 11.

- Գնահատել կատարողական վարույթների ավտոմատացման գործնական արդյունքները
  - Հրապարակել կատարողական գործողությունների միջին տևողության և ինքնաշխատ եղանակով իրականացվող գործընթացների տեսակարար կշռի վերաբերյալ տվյալներ՝ գնահատելու համար՝ արդյոք ներդրված տեխնիկական և ծրագրային լուծումները հանգեցրել են կատարողական վարույթների արագացմանը և նախատեսված արդյունքների ապահովմանը:
- Բարելավել վերապատրաստումների արդյունքների գնահատման մեխանիզմները:
  - Վերապատրաստումների հաշվետվություններում ներկայացնել դասընթացների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության գնահատման արդյունքները:
- Ապահովել օրենսդրական բարեփոխումների գործնական ազդեցության գնահատումը:
  - «Կատարողական վարույթի մասին» օրենքի և «ՀԿԱԾ-ի մասին» օրենքում կատարված փոփոխությունների կիրարկման հիման վրա պարբերաբար գնահատել դրանց ազդեցությունը կատարողական գործողությունների տևողության, վարույթների արդյունավետության և կատարողական գործընթացների կազմակերպման վրա՝ արդյունքների հիման վրա անհրաժեշտ լրացուցիչ օրենսդրական կամ կազմակերպական միջոցառումներ նախատեսելու համար:

ՆՊԱՏԱԿ 12.

- Արդարադատության ակադեմիայի մասին օրենքի փոփոխությունների շրջանակներում Իրավական կարգավորման փոփոխությունների անհրաժեշտությունը կապել կրթական ծրագրերի որակի, գործնական հմտությունների զարգացման և դատավորների, դատախազների ու քննիչների վերապատրաստման իրական կարիքների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ.....39
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 44

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 45

ՆՊԱՏԱԿ 1. «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ու արդիականացում 47
Դատական գործերի էլեկտրոնային կառավարում: 48
Հաշտարարության և հրապարակային ծանուցումների թվայնացում: ..50
Պրոբացիայի, հարկադիր կատարման և քրեակատարողական համակարգերի թվայնացում: 50
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի արխիվային նյութերի թվայնացում: 51
Նոտարական ծառայությունների թվայնացում: 51

ՆՊԱՏԱԿ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառում՝ փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտմամբ 52

ՆՊԱՏԱԿ 3. Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում 53
Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և մասնագիտական հանձնաժողովի գործունեության ապահովում.....53
Սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի և նախագծի մշակում 54
Ընտրական օրենսդրության փոփոխությունները և գնահատում.....55

ՆՊԱՏԱԿ 4. Դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովում 56

Դատարանների պայմաններ, դատավորների ընտրություն և վերապատրաստում.....58
Հակակոռուպցիոն դատարանների (ներառյալ՝ դրա ակտերի դեմ բերված բողոքները քննող կազմի) արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային և նյութատեխնիկական միջոցների ապահովում 59
Դատավորների նշանակման օրենսդրական կարգի վերանայում՝ բարձրացնելով դատավորների հավակնորդների թեկնածուների որակավորման գրավոր քննության և բանավոր հարցազրույցի արդյունքների արձանագրման օբյեկտիվությունը և նախատեսելով դատավորների ներգրավման նոր ընթացակարգեր.....59
Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով կայացված որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսում.....60
Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշռի վերանայում.....60

ՆՊԱՏԱԿ 5. Քրեաիրավական ոլորտի բարեփոխումներ.....62

ՆՊԱՏԱԿ 6. Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումներ.....63
Քաղաքացիական դատավարության և պարտավորությունների ապահովման կարգավորումներ.....63

Էլեկտրոնային արդարադատություն և գնահատման սահմանափակումներ.....64

ՆՊԱՏԱԿ 7. Վարչական և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումներ.....65
Ոլորտային Խնդիրների գույքագրում և փոփոխությունների փաթեթի պատրաստում: 65

Էլեկտրոնային դատավարություն և վարչական իրավախախտումների օրենսդրություն 65

ՆՊԱՏԱԿ 8. Սնանկության ոլորտի բարեփոխումներ.....66

ՆՊԱՏԱԿ 9. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում 68

Արբիտրաժային կենտրոնի ստեղծում 68:
Արբիտրաժի և հաշտարարության օրենսդրական գործիքներ 69

ՆՊԱՏԱԿ 10. Իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներ 69

Փաստաբանների պալատի կարգավորումներ և անվճար օգնության շրջանակ.....69
Հարկային փոփոխություններ և չկատարված գործողություններ 70

ՆՊԱՏԱԿ 11. Հարկադիր կատարման համակարգի բարեփոխումներ 71

ՆՊԱՏԱԿ 12. Ռազմավարական այլ ուղղություններ.....73

Նոտարական ոլորտի կարգավորումներ 73
Արդարադատության ակադեմիա և փորձագիտական գործունեություն.....74

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....76
Ա/ Մեթոդական առաջարկներ.....76
Գործողության կատարողականի գնահատման առնչությամբ 76
Գործողության ցուցիչների կատարողականի գնահատման առնչությամբ.....76
Հաշվետվությունների պարբերական թարմացում և հրապարակայնություն.....77
Ընդհանուր բնույթի առաջարկներ 77
Բ/ Առանձին ռազմավարական նպատակների առնչությամբ.....78